

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆ ԵՎ ՓԱՐԻԶ

Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը սույն թվականի մայիսի 6-ից մինչև հունիսի 1-ը հովվապետական այցելություն տվեց Լոնդոն և Փարիզ, հրավերովը Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիլիրյանի և լոնդոնահայ համայնքային եկեղեցական խորհրդի, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը՝ որպես գավազանակիր:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Մայիսի 3-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Ողջ միաբանությունը աղոթում է Նորին Սրբության բարի և խաղաղ ուղևորության համար:

Աղոթքից հետո Մայր Աթոռի միաբանների անունից Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, նաև Մայրավանքի պաշտոնեությունը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գոր-

ծերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Երկու և կես ժամ տևող թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի Վնուկովո օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ է մաղթում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր եկել ՍՍՀՄ Մինիստրների Խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի աշխատակից տիար Էդվարդ Գալստյանը:

Այնուհետև Վեհափառը առաջնորդվում է Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոցի իրեն հատկացված մասնավոր հարկաբաժին:

ՄԵԿՆՈՒՄ ԼՈՆԴՈՆ

Մայիսի 6-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով Մոսկվայի «Շերեմետևո-2» օդանավակայանից մեկնում է Լոնդոն:

Լոնդոնի «Հիթրո» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին, խանդավառ մթնոլորտում, դիմավորում և բարի գալուստ են մաղթում Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ, Վիլկդընի եպս. Հիվեթ Թոմսոնը, Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Եգիպտոսի և Աֆրիկայի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Տ. Հովնան աբեղա Տերտերյանը, Անգլիայում Սովետական Միության դեսպանության ներկայացուցիչ տիար Օ. Կորդիևսկին, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս և Ս. Պետրոս եկեղեցիների պատվարժան հոգաբարձուներ և բազմաթիվ լոնդոնաբնակ հայեր:

ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՄԱՏՈՒԱՆ ՄԵՋ

Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Վիլկդընի եպս. Հիվեթ Թոմսոնի, օդանավակայանի մատռան քահանայից դասի և այլ պաշտոնական անձանց ուղեկցությամբ, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով առաջնորդվում է օդանավակայանի Ս. Գևորգ մատուռը, ուր հավաքվել էին բազմահարյուր հավատացյալներ: Մատռան մեջ բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես են գալիս Վիլկդընի եպս. Հիվեթ Թոմսոնը՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսի անունից, ապա Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը: Այստեղ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն է հայտնում ցուցաբերված ջերմ ընդունելության համար և օրհնում Մեծ Բրիտանիան, նրա արի և ազնիվ ժողովրդին:

Բարիգալստյան և ողջույնի խոսքերի փոխանակումից հետո Հայոց Հայրապետը ավտոմեքենաների շարասյունով առաջնորդվում է Լոնդոնի Քենսինգթըն շրջանի «Ռոյել Գարդենս» հյուրանոցը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՏ ԼԱՄԲԵԹ ՊԱԼԱՏՈՒՄ

Նոյն օրը, երեկոյան ժամը 17-ին, Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ռոբերտ Ռանսին կապմակերպում է ընդունելություն Հայոց Հայրապետի պատվին: Բարիգալստյան և ողջույնի խոսքերից հետո Լամբեթ պալատի մատռան մեջ տեղի է ունենում երեկոյան հանդիսավոր ժամերգություն: Արարողության վերջում Քենթրբերիի արքեպիսկոպոսը, ի ներկայության անգլիացի և հայ հավատացյալների, արտասանում է հետևյալ ճառը.

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻԻ ԽՈՍՔԸ
(6 մայիսի 1983 թ.)

Բարի գալուստ մաղթելով Հայոց Ծայրագույն Պատրիարքին՝ Մենք ողջունում ենք ոչ միայն մի մեծ և պատմական Եկեղեցու պետին, այլև Նրան, որը խորհրդանշում է ամբողջ հայ ազգի միությունը թե՛ Սովետական Հայաստանում և թե՛ սփյուռքում, մի ազգ, որ վերջին ժամանակներում բոլորից ավելի տառապած է իր քրիստոնեական հավատքի համար:

Բայց Հայաստանյայց Եկեղեցին և ժողովուրդը հույսի խորհրդանիշ են, ինչպես նաև մարտիրոսության վկաներ: Հայ ժողովրդի հիշողության մեջ խորագույն խորհրդանիշներից է Արարատ լեռը՝ մարդկային ցեղի խորհրդանշական ապավենը, որտեղից ձիթենու տերևներ քաղեց Նոյի աղավնին, որը ազգերի միջև խաղաղություն է պատգամում:

Բայց կան հատուկ կապեր, որոնք միացնում են անգլիկաններին և հայերին: Դ դարի հենց սկզբին, Ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ, Հայաստանը առաջին պետությունը հանդիսացավ, որ քրիստոնեական հավատքը որդեգրեց մի երկոտասան տարիներ Կոստանդիանոսից առաջ, որը Հռոմեական Կայսրության մեջ քրիստոնեության դատը պաշտպանեց:

Անգլիկան Եկեղեցին նույնպես շարունակում է իր ազգի մեջ իր հատուկ տեղը պահել և նույնիսկ այնտեղ, որտեղ իրավական հաստատություն չկա Անգլիկան Եկեղեցու իշխանության տարածքում. անգլիկանները բնավդաբար հասկանում են Հայաստանյայց Եկեղեցու և ժողովրդի սերտ նույնացումը:

Մեկ դար հետո Ս. Մեսրոպ Մաշտոցը Հայաստանին տվեց իր այբուբենը և ժողովրդի լեզվով ծեսը. և այստեղ կրկին անգլիկանները հասկանում են ույժը այսպիսի մի մշակութային և կրոնական համերաշխության: Ըստ ավանդության, միջնադարյան լատին ժամագրքերը վերանայվեցին և թարգմանվեցին Կրենմլը Արքեպիսկոպոսի աշխատասենյակում, ճիշտ մեր գլխավերևում՝ անգլիախոս ժողովուրդներին տալով իրենց աղոթագիրքը: Անգլիկան ավանդության մաս է կազմում ակնկալել, որ աշխարհի եկեղեցիները կրեն իրենց մշակույթի կնիքը և խորապես արմատավորված լինեն իրենց հատուկ ազգային ավանդություններում:

Վերջերս սերտ կապեր հաստատված են մեր Եկեղեցիների միջև: Ես հատկապես ուրախ եմ կրկին տեսնելով Ներսես եպս. Պոլսպալյանին, նախ որպես ուսանող հոգևորական անգլիկան աստվածաբանական կոլեջում, ապա որպես Հայաստանյայց Եկեղեցու եպիսկոպոս և հայրապետական պատվիրակ Լոնդոնի հայոց և այժմ էլ որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ: Նա իր անձնավորության մեջ մարմնավորում է մեր ջերմ հարաբերությունները:

Լավագույն հիշողություններ ունեմ Ս. Էջմիածնի Վեհարանից և Հայկաշե-

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԲԵՐՏ ՌԱՆՍԻԻ ՀԵՏ

նի հայրապետական ամառանոցից, որտեղ Ձերդ Սրբությունն ինձ հյուրընկալեց:

Ձերդ Սրբությունն արդեն ստացել է մեր Եկեղեցու բարձրագույն պատվանշանը՝ Լամբեթի Խաչը: Իսկ այժմ ես տալիս եմ Ձեզ, որպես մեր բարեկամության մի փոքրիկ հավաստիք, հատուկ կազմված մի հատոր մեր **նոր ժամագրքի և աղոթագրքի:**

Ձերդ Սրբություն, Լոնդոն ժամանելուց հետո Ձեր առաջին ձեռնարկումը եղավ այցի գալ մեզ. Ձեզ ողջունում, բարի գալուստ եմ սաղթում ու աղոթում՝ հայցելով Աստուծո օրհնությունը Մեծ Բրիտանիայի Ձեր համայնքների և Ձեր հովվապետական այցելության վրա:

Այնուհետև հանդես է գալիս Հայոց Հայրապետը հետևյալ պատասխան խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՔԵՆԹԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՌՈԲԵՐԹ ՌԱՆՍԻԻՆ

(Լոնդոն, 6 մայիսի 1983 թ.)

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս,

Գոհություն բարին Աստծուն, որ ինձ վերստին շնորհում է այս երջանիկ պահը մի անգամ ևս լինելու այստեղ, Լամբեթի պալատում և ողջագուրվելու Ձերդ Գերաշնորհության հետ:

Արդեն պատմական ավանդություն է դարձել բարեկամությունը Հայ Առաքելական Եկեղեցու և Անգլիկան մեծ Եկեղեցու միջև: Ինձ նախորդող հայոց կաթողիկոսները, ինչպես և Երուսաղեմի ու Կ. Պոլսի հայոց պատրիարքները, Ձեզ նախորդող արքեպիսկոպոսների հետ, պահպանել են ու մշակել եղբայրական հարաբերություններ ի Քրիստոս սիրով:

Այս իրողությունը իմ սիրտը լցնում է հոգեկան մխիթարությամբ, այս իրողությունը ինձ ավելի է կորացնում իմ առաքելության ճանապարհին, այս իրողությունն է, որ իմ քայլերը առաջնորդել է դեպի Ձերդ Գերաշնորհությունը:

Վերջին մոտ երկու հարյուր տարիների արխիվներում բազմաթիվ փաստաթղթեր են պահպանված Ս. Էջմիածնում և վստահ ենք նաև ձեր Եկեղեցու արխիվներում, որոնք խոսում են մեր երկու Եկեղեցիների պատմական հարաբերությունների մասին:

Թույլ տվեք այսօր ներկայացնել մի հատված, քաղված այդ փաստաթղթերի մեկից, որը կրում է 7 օգոստոս 1884 թվականը, ստորագրված Էդվարդ Գանդուար Արքեպիսկոպոսից, ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

«Ի Քրիստոս Մեր սիրելի որդուն՝ Ատհելստեն Ռայլին, որը Օքսֆորդի համալսարանի Պեմբրոկի ֆակուլտետում արվեստագիտության դասախոս է, հանձնարարված է Մեր կողմից այցի գնալ Քուրդիստանում և Պարսկաստանում բնակվող քրիստոնյաներին՝ վերահասու լինելու համար նրանց կացությանը և տեղեկանալու, թե արդյոք կարոտության մե՞ջ են և թե կարողանո՞ւմ են իրենց կարիքները հայթայթել իրենց քրիստոնյա այն մերձավոր եղբայրների կողմից, որոնք այն կողմերում են գտնվում:

Այս առիթով, անպատեհ թվաց Մեզ, որ մեր պատգամավորն անցնի հրաչակավոր Սուրբ Էջմիածնի Դռան մոտով՝ առանց իր հարգանքի պատշաճ տուրքը մատուցելու Ձերդ Սրբության ոտքերին և միաժամանակ բերելու Մեր կողմից հղված մեծարանքի գրությունը, որով հայտնում ենք Մեր սերը Արևել-

յան Եկեղեցիների հանդեպ, մասնավորապես Հայ Եկեղեցու հանդեպ, որը հիմնադրվել է Աստուծո կողմից սուրբ Գրիգոր Լուսավորչի միջոցով:

Ցանկանում ենք, որ բոլոր սուրբ Եկեղեցիները զորանան ու լուսավորվեն Աստուծո Հոգով և հափշտակողներ չլինեն՝ պատճառ դառնալով, որ հավատացյալները բաժանվեն իրենց մայրենի Եկեղեցիներից, այլ լինեն միմյանց կապված սիրո և միության կապով ու կատարյալ լինեն հավատքի մեջ՝ մեր հույսով և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջնորդությամբ»:

Այս փաստաթուղթը պատմական ապացույցներից մեկն է, թե Քենթրբերիի Արքեպիսկոպոսները ինչպիսի եղբայրական սեր և հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Ս. Էջմիածնի Աթոռի գահակալների և Հայ Եկեղեցու նկատմամբ, հատկապես անցյալ դարում, երբ Հայ Եկեղեցին ու ժողովուրդը հեծում էին բռնակալ պետությունների ծանր լծի տակ:

Այս փաստաթղթում դրսևորվում է նաև Անգլիկան Եկեղեցու պետի իրավ քրիստոնեական ոգին, պիտի ասենք՝ էկումենիկ լայնախոհ ոգին, որով նա ցանկություն է հայտնում, որ բոլոր Եկեղեցիները, լուսավորված Սուրբ Հոգով, մեկը մյուսից չհափշտակեն հավատացյալներին, և բաժանումներ չստեղծվեն մայրենի Եկեղեցիների ծոցում, այլ Եկեղեցիները բոլոր կապված լինեն ի Քրիստոս սիրո միության մեջ:

Ինչքան այժմեական է հնչում Անգլիկան Եկեղեցու այս փաստաթուղթը՝ գրված ուղիղ մեկ հարյուր տարի առաջ:

Ս. Էջմիածնից նույն ոգով գրված է նաև պատասխան նամակը 1884 թվի սեպտեմբերի 21-ին՝ Մկրտիչ Խրիմյան արքեպիսկոպոսի ստորագրությամբ:

Ես մտածում եմ, որ միջեկեղեցական փոխադարձ սիրո, միատեղ աղոթելու և միատեղ գործելու այս ոգին, ճշմարիտ էկումենիկ ոգին, հրամայական պահանջ է մանավանդ մեր օրերին, երբ աշխարհը ալեկոծ է բաղում անարդարություններով, բաղում նախապաշարումներով, բաղում վատառողջ կրքերով ու անսանձ թշնամություններով, երբ մարդիկ ու ազգությունները լույսի և խաղաղության մի ճանապարհ են որոնում գրեթե հուսահատ: Թվում է, թե մարդկությունը հասել է մի հանգրվանի, երբ իր բանականության ուժերը այլևս անզոր են դարձնում ինքն իրեն ղեկավարելու: Այսպիսի իրադրության մեջ, մեր օրերին, կարծում եմ առավել հրամայական է դառնում, որ Եկեղեցիների պատասխանատու սպասավորները միատեղ աղոթեն ու գործեն Քրիստոսի Ավետարանը իրենց ձեռքում՝ որոնելու համար փրկության մի ճանապարհ:

Ես չգիտեմ՝ կհաջողվի՞ այդ մեկ՝ Եկեղեցիներիս, մեկ՝ քրիստոնյաներիս: Պիտի կարողանա՞նք քանդել միջնորմը թշնամությունների, պիտի կարողանա՞նք համոզել ժողովուրդներին և պետական ղեկավարներին, որ բոլոր մարդիկ միևնույն Աստուծո որդիներն են, որ եղբայրներ են միևնույն տան մեջ բնակվող, միևնույն առօրյա դժվարություններով, միևնույն երազանքներով, միևնույն ճակատագրով:

Արդյոք մեր օրերի մարդկանց պիտի կարողանա՞նք լսելի դարձնել Աստուծո սաստը, թե՝ «Ո՞ւր է, Աբել, եղբայր քո»:

Ատոմական աշխարհակործան ուժերի սանձազերծման վտանգի առաջ կանգնած՝ արդյոք ժամանակը իր լրումին չի՞ հասել, որ լսելի դառնա Եսայի մարգարեի մեծ տեսիլքը: Մի՞թե չենք անդրադառնում այսօր բոլորս, թե անցնող դարերի ընթացքում մեր դժբախտ երկրագունդը ողողող արյան հեղեղները իզուր և աննպատակ են եղել: Ի՞նչ շահեցին վերջին համաշխարհային պատերազմները սանձազերծողները:

Եվ այստեղ թույլ տվեք, սիրեցյալ Եղբայր, հիշել սև ճակատագիրը մեր հայ

ազգի, հարյուրամյակներ շարունակ և հատկապես 1915 թվին, երբ նա վոհ գնաց մեր դարի առաջին ցեղասպանությանը՝ կորցնելով իր վավակների մոտ երկու երրորդը: Ես այսօր էլ սարսափով մտածում եմ հնարավոր մի նոր պատերազմի մասին, մեր վերածնված հայրենիքի սահմանների վրա: Ո՞վ կհամարձակվի մեկ՝ հայերիս, մեկ՝ հայաստանցի հայերիս խոսել պատերազմի և սպառազինումների քաղաքականության արդարացման մասին: Ես, իբրև իմ ժողովրդի հոգևոր սպասավորը և պահապանը, իմ սրտի բովանդակ ջերմությամբ աղոթում եմ աշխարհի բոլոր ազգերի խաղաղ գոյակցության համար, աղոթում եմ իմ ժողովրդի, իմ Եկեղեցու կյանքի անվտանգության և բարօրության համար:

Ներող եղեք, եթե շատ համարձակ եղա իմ սիրտը բացելու Ձեր առաջ: Սակայն այստեղ, Ձեզ մոտ, ես ինձ զգում եմ եղբայրներիս մեջ, որոնք, վստահ եմ, թե կհասկանան ինձ, կհասկանան իմ հոգու տագնապը, ծանր տագնապը մի ժողովրդի հոգևոր սպասավորի, ժողովուրդ, որ դարեր շարունակ ոտքի կոխան է եղել ու բնաջնջվել ավելի ուժեղ պետությունների միջև պատերազմների ընթացքում: Մեր աղերսանքն է առ Աստված և մեր փրկարար հույսը, որ «խաղաղությունը և արդարությունը համբուրվեն»:

Վստահ եմ, որ Վանկուվերի Եկեղեցիների էկումենիկ համագումարում բարձր պիտի հնչի սաղմոսերգուի այս մարգարեությունը, քանի որ այդ համագումարի նշանաբանն է լինելու՝ «Յիսուս Քրիստոս՝ կեանքն աշխարհի»: Քրիստոս աշխարհի կյանքն է, քանզի Նա է իշխանը խաղաղության և արեգակը արդարության: Մարդկային կյանքը ծաղկում է արդարության լույսով, խաղաղության մեջ:

Թող մեր Տերը Քրիստոս օրհնի մեր այսօրվա ողջագուրումը և մարտակից մնա Ձերդ Գերաշնորհությանը և ինձ, որպեսզի կարողանանք մեր պարտքը լիությամբ կատարել ի խնդիր աշխարհի վրա Իր կամքի իրագործման, կամք՝ որ աղբյուրն իսկ է կյանքի:

Շնորհակալ եմ Ձեր այս շատ սիրալիր ընդունելության համար: Մաղթում եմ Ձեզ մշտատև քաջառողջություն և պտղառատ հոգեշեն գործունեություն:

Մնում եմ աղոթող ձեր պատմական Եկեղեցու անսասանության և ձեր հավատավոր ժողովրդի բարօրության ու խաղաղության համար:

«Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք ի Քրիստոս Յիսուս» (Փիլիպ. Դ 19): Ամեն:

Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետը Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Ռոբերտ Ռանսիի կուրծքը զարդարում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանով:

Ժամերգությունից հետո Քենթրբերիի Արքեպիսկոպոսը, ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, պաշտոնական ճաշկերույթ է տալիս Պալատի սեղանատանը: Ճաշկերույթի ավարտին Հայոց Հայրապետը Քենթրբերիի Արքեպիսկոպոսին նվիրում է հայկական ոճով պատրաստված մի գեղեցիկ սկիհ, իսկ Արքեպիսկոպոսի քարտուղար հոգեշնորհ Ռիչարդ Չարդրին և Անգլիկան Եկեղեցու արտաքին հարաբերությունց ղեկավար կանոնիկոս Քրիստոֆր Հիլին՝ վարդապետական լանջախաչեր:

Վեհափառ Հայրապետի Լոնդոն այցելությանը նույն և հաջորդ օրերին արձագանքում են Լոնդոնի հեռուստատեսությունը, ռադիոն և սի շարք տեղական կարևոր թերթեր:

* *
*

Մայիսի 7-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունում է այցելությունը տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների:

Նույն օրը, ժամը 16-ին, Լոնդոնի Էփսմ արվարձանում Վեհափառ Հայրապետը հրավիրվում է ընտանեկան ճաշկերույթի Մայր Աթոռի բարերար և Լոնդոնի Սուրբ Սարգիս եկեղեցու խնամակալության նախագահ Սարգիս Քյուրքճյանի կողմից:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 8-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Լոնդոնի հայոց Ս. Պետրոս եկեղեցում մատուցում է հանդիսավոր սուրբ պատարագ:

Պատարագին ներկա էին Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչներ՝ Ջիբրալթարի եպիսկոպոս Ջոն Սայդրին և Լոնդոնի նախկին եպիսկոպոս Ջերարդ Էլիսոնը, քույր Եկեղեցիների պաշտոնական այլ ներկայացուցիչներ, ինչպես նաև հայ և օտար բազմաթիվ հավատացյալներ:

«Հայր մեր»-ից առաջ, հուզումնալից մթնոլորտի մեջ, Նորին Սրբությունն արտասանում է հետևյալ ոգեշունչ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ
(8 մայիսի 1983 թ.)

«Տէր, եթէ կշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Սիրելի հոգևոր եղբայրներ և սիրելի հավատացյալներ,

Սա պահուն իմ հոգին լեցուն է սաղմոսերգուի այս զգացումով: Փառք կուտամ Աստուծո, որ վերստին պարգևեց ինձի այս սքանչելի օրը Ս. Պետրոս այս փառավոր տաճարի կամարներուն տակ՝ ձեզի բոլորիդ բերելու ողջույն մեր Մայր Հայրենիքեն և Աստուծո օրհնությունը սրբություն սրբոց ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն: Չեմ գիտեր, եթե դուք ինձի ամբողջովին կհասկընաք և կզգաք իմ սրտի հուզումը այս պահուն, բայց կվստահեցնեմ ձեզ, որ Ամենայն Հայոց Հայրապետի մը համար չկա ավելի երջանիկ օր, քան հանդիպիլ սփյուռքի ճամփաներուն վրա ապրող մեր հարազատ զավակներուն, ինչպիսին դուք եք բոլորդ անխտիր: Հայ ժողովուրդի բոլոր զավակները, առանց բացառության, ուր ալ գտնվին այս աշխարհի արևի տակ, հարազատ զավակներն են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, և մենք թեև ձեզմե հազարավոր մղոններ հեռու, բայց կզգանք տևապես մեր մեջ հոգևին ներկայությունը մեր ամբողջ ազգին: Եվ ահա այսօր անձամբ վերստին կհանդիպեմ ձեզի այս քրիստոսասեր բարի հողի վրա, Մեծն Բրիտանիո այս փառավոր մայրաքաղաքին մեջ և ուրախությունն ունիմ իմ ապրումները փոխանցելու ձեզի:

Ես գոհություն կուտամ Աստուծո, որ մեզի հետ ներկա են այստեղ, մեր Եկեղեցվո սպասավորներու կողքին, նաև Անգլիկան մեծ Եկեղեցվո պատասխանատու բարձրաստիճան հոգևորականներ՝ ներկայացուցիչները Քենթրբերիի արքեպիսկոպոսի, որոնք կուգան մեզի հետ աղոթելու և մեզի հետ գործակցելու հետագա միջեկեղեցական գործունեության ընթացքին:

Ես չեմ կրնար երախտագիտությամբ չհիշել երեկվա օրը, երբ երջանկությունը ունեցա Լամբեթ պալատի մեջ ողջագուրվելու Մեր սիրեցյալ եղբոր՝ Անգլիկան Եկեղեցվո պետ Նորին Գերաշնորհություն Քենթրբերիի արքեպիսկոպոս Ռոբերտ Ռանսիի հետ, երբ երկուքս հոգեկցության երջանիկ պահեր ապրեցանք՝ աղոթելով և մտքերու փոխանակություն ունենալով մեր Եկեղեցիները շահագրգռող և աշխարհը այսօր հուզող ընդհանուր հարցերու առնչությամբ: Այս էկումենիկ դարաշրջանին, բոլոր քրիստոնեական Եկեղեցիներս, մանավանդ մենք՝ Եկեղեցիներու պետերս, մտահոգված ենք աշխարհի ներկա խռովահույզ վիճակով և կփափագինք, Ս. Ավետարանը մեր ձեռքին, մեր բարի խոսքը մատուցանել, օգնել ապգերուն, պետություններուն, որպեսզի ամենքը միասնաբար, ամեն բանե վեր, մտահոգված ըլլան այս աշխարհը, դարերով տանջված մեր այս երկրագունդը հասցնելու խաղաղության, մարդասիրության և արդարության նավահանգիստը, այնպես, ինչպես կպատգամե մեզի մեր Տերը Հիսուս Քրիստոս:

Սիրելի ժողովուրդ, այսօր ուրիշ հոգեկան գոհունակություն մը ևս ունեցա քիչ առաջ, իմ ծածուկ աղոթքներու մեջ աղոթելով այս քրիստոսասեր երկրի՝ Մեծն Բրիտանիո ժողովրդին և անոր օգոստափառ Էլիզաբեթ թագուհիին քաջառողջության, արևշատության և երջանիկ գահակալության համար:

Կփափագիմ նաև իմ գնահատանքի խոսքը ուղղել մեր հոգևոր եղբայրներուն, որոնք այստեղ կգտնվին. նախ ձեր հոգևոր առաջնորդին՝ գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիզիրյանին, իր բոլոր գործակիցներուն, երիտասարդ վարդապետներուն, աբեղաներուն և եկեղեցվո մյուս բոլոր ծառայողներուն, որոնք շեն և պայծառ կպահեն այս փառավոր քաղաքին մեջ այս երկու հայկական եկեղեցիները՝ Ս. Պետրոսը և Ս. Սարգիսը:

Իմ օրհնությունը և գնահատանքը նաև այս երկու եկեղեցիներու ղեկավարներուն, Ս. Պետրոսի համայնքային խորհուրդին, որ ամբողջ Լոնդոնի հայ հավատացյալ ժողովրդի ներկայացուցիչն է, անոր վարչության անդամներուն և իրենց գործակիցներուն, նաև Ս. Սարգիս եկեղեցվո խնամակալ մարմնին, երկու եկեղեցական կազմակերպություններ, որոնք ձեռք-ձեռքի տված՝ բարձր կպահեն սուրբ անունը մեր Առաքելական Եկեղեցիին և պատիվը մեր հավատացյալ ժողովուրդին այս քաղաքակիրթ աշխարհի կեդրոնին մեջ:

Կփափագիմ պահ մը հիշել նաև մեծ առաքյալի՝ Պողոս առաքյալի մեկ նշանակալից խոսքը, պատգամը՝ բնորոշելու համար, թե ինչ է Եկեղեցին, Քրիստոսի Եկեղեցին: Պողոս առաքյալ, որպեսզի ավելի պարզ և հստակ դարձնե իմաստը այս գաղափարին, այսինքն՝ Քրիստոսի Եկեղեցի հասկացողության, խորաթափանց իր մտքով կնմանեցնե Եկեղեցին, այսինքն՝ հավատացյալներու հավաքականությունը՝ անհատ մարդու մարմնին: Եվ կըսե մեծ առաքյալը. ինչպես որ մարդկային մարմինը մեկ ամբողջություն կկազմե, բայց բաղկացած է բազմաթիվ մասերե, բազմաթիվ անդամներե, և թեև ամեն մեկը իր գործը, իր պաշտոնը կկատարե, բայց ինքնագլուխ չէ և միաժամանակ կծառայե ամբողջ մարմնին և մարմնի յուրաքանչյուր անդամին, այնպես ալ Եկեղեցվո մեջ, համայնքի հավաքական կյանքի մեջ ամեն մեկ անհատ իր տեղը, իր պաշտոնը ունի, բայց նաև կծառայի ամբողջ Եկեղեցիին, ամբողջ համայնքին և համայնքի յուրաքանչյուր անդամին: Ահավասիկ այս պատկերով Պողոս առաքյալ կուզե հասկցնել մեզի բոլորիս այսօր ալ, որ Եկեղեցին մեկ մարմին է՝ բազում անդամներով, բազում հավատացյալներով, ամեն մեկը իր պաշտոնով, իր գործով, իր դիրքով, իր գործելու ձևերով, սակայն ամեն մեկը նաև մասնիկն է ամբողջ Եկեղեցիին, և մեկը մյուսին ծառայող՝ միասնաբար ապրելու համար

խաղաղ ու ներդաշնակ: Պողոս առաքյալի այս նշանավոր պատկերը կկարծեմ, մշտապես այժմեական է: Եվ գուցե առավել ևս այժմեական է և իմաստալից մեզի համար, մեր Հայաստանյայց Եկեղեցիին համար, մեր հավատացյալ ժողովուրդին համար, որ, ճակատագրի բերումով, ցրված կապրի՝ Հայաստանի մեջ երեք միլիոն, մյուս երեք միլիոնը աշխարհի բոլոր ճամփաներուն վրա: Բայց մենք մեր քրիստոնեական հավատքով, մեր Մայր Եկեղեցիով կկազմենք մեկ ամբողջական մարմին մը անբաժան և անբաժանելի: Ամեն հայ իր բնակած երկրի քաղաքացին է բնականաբար և, իբրև այդպիսին, իր պարտականությունները կկատարե և պետք է կատարե հավատարմությամբ և օրինապահությամբ: Նաև ամեն հայ մարդ այս ու այն երկրի մեջ, տարբեր-տարբեր մշակութային կամ այլ ազդեցություններու տակ կապրի բնականաբար: Հետևաբար հայերը, երևի ամեն հարցերու առնչությամբ, միակերպ չեն կրնար մտածել: Բայց այս բոլորեն վեր, Հայ Եկեղեցվո բոլոր զավակները անխտիր կմիանան մեկ ամբողջական և անբաժանելի մարմնի մը մեջ, որ կկոչվի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի: Մենք այդ մարմնի անդամներն ենք բոլորս՝ կաթողիկոսեն սկսյալ: Եվ ամեն մեկս մեր դիրքերուն մեջ, մեր երկիրներուն մեջ, մեր պայմաններուն մեջ, հոգևոր եկեղեցական մակարդակի վրա, մեկ ենք, ամբողջ ենք, անբաժանելի ենք, հայ քրիստոնյա ենք, մեկ ճակատագիր ունինք, և մեր առաքելությունն է այս արևի տակ պահպանել մեր գոյատևումը անաղարտ ու աննահանջ, այնպես, ինչպես Աստված մեզ ստեղծեր է իբրև հայ ժողովուրդ և Հայ Եկեղեցի: Հավատարիմ մնանք այս սրբական առաքելության, հավատարիմ մնանք Պողոս առաքյալի պատգամին, հավատարիմ մնանք մեր Եկեղեցվո պատգամներուն, մեր մայրենի լեզվին, մեր հոգևոր մշակույթի անկորնչելի արժեքներուն, հավատարիմ մնանք Արարատին, որոնք փառքը կրկնազմեն մեր ազգին, քաղաքակիրթ աշխարհի հորիզոնին վրա:

Ահավասիկ, սիրելի հավատացյալներ, այն, ինչ որ իմ սրտես կբխի այսօր իբրև հորդոր և, եթե կուզեք, իբրև պատգամ: Ապրեցեք այս հյուրընկալ, բարի երկրին մեջ՝ ձեր բոլոր քաղաքացիական պարտականությունները կատարելով ազնվությամբ, շինարար ոգիով, միաժամանակ մնալով հարազատ զավակները մեր Մայր Եկեղեցվո և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Հայոց Կաթողիկոսի աղոթքները, օրհնությունը միշտ ձեզի հետ են այժմ և հավիտյան:

«Շնորհք և սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն»:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ ՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 14.30-ին, Ս. Պետրոս եկեղեցու վարչությունը եկեղեցուն կից սրահում կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էին Անգլիկան Եկեղեցու հարգարժան ներկայացուցիչները, Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Տ. Ներսես Եպս. Պոզապալյանը, Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը, Տ. Հովնան աբեղա Տերտերյանը, Լոնդոնի համայնքային եկեղեցական վարչության անդամները և բազմաթիվ հրավիրյալներ:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղյալ բարիգալստյան հետևյալ խոսքով հանդես է գալիս Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը.

«Վեհափառ Տեր,

Ինձի համար բացառիկ երջանկություն ու պատիվ է այսօր հանուն Անգլիո մեր գաղութին և անոր պաշտոնական մարմիններուն և հավատացյալ ժողովուրդին, բարի գալուստ մաղթել Ձերդ Վեհափառության այս շնորհաբեր այցին առթիվ՝ մատուցանելով մեր որդիական ակնածալից և սիրալեղ հարգանքները:

Շնորհալարդ Հայրապետ, կողջունենք Ձեզ իբրև հարազատ խորհրդանիշը Հայաստանյայց Ս. Եկեղեցվո և մեր դարավոր հայ մշակույթին: Դուք, Վեհափառ Տեր, արժանավոր շառավիղը կիանդիսանաք մեր պատմության լուսավոր և երանաշնորհ Հայրապետներուն, որոնք Լուսավորչի օրերեն մինչև մեր օրերը քար առ քար, կամար առ կամար շինած են ու բարձրացուցած Ս. Էջմիածինը իբրև հայ ժողովուրդի հավատքին ու հավերժության խորհրդանիշ:

Վեհափառ Տեր, Դուք կուգաք աստվածակառույց Ս. Տաճարեն, որ մեր հոգիներուն մայրն է և մեր գոյության փրկության Տապանակ Ուխտին: Ս. Էջմիածինը հընթացս դարուց եղած է մեր հոգևոր լուսավորության վառարանը, որ աճեցուցած է մեր լույս հավատքն ու հոգևոր կյանքը: Ան հանդիսացած է շտեմարանը մեր իմացական կյանքին, ուր ծաղկած և ուրկե ճյուղավորված են մեր դպրությունն ու գեղարվեստները:

Վեհափառ Տեր, Դուք միշտ եղած եք սիրո Սերմնացանը. ուր այցելած եք, որու որ հանդիպած եք՝ համայնքներ, անհատներ, կանոնք ըրած եք Ձեր արտը, որուն մեջ թափած եք Ձեր սիրո հորդառատ սրտեն բարի սերմեր, որոնք պարարտ հող գտած են հայ հավատացյալ ժողովուրդի հոգիներուն մեջ: Հայ ժողովուրդը Ձեր առինքնող ու ճառագայթող անձին վրա տեսած է հարություն առած մեր մեծանուն ու առաքինապարդ Հայրապետները, և տեսած է Ձեր լուսավոր ու պայծառ աչքերուն մեջ Ս. Լուսավորչի կանթեղին անշեջ լույսը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք մեր սրտագին մաղթանքները միացնել հավարավորներու աղոթավոր ձայնին և խնդրել Աստուծմե, որ անսասան պահե Ձեր սուրբ Գահը և անշեջ ու պայծառ՝ Արագածի կատարին Ս. Լուսավորչի հավերժորեն անմար կանթեղը Ս. Սեղանի կամարներուն տակ:

Թող բարության ու խաղաղության Տերը առաջնորդե Ձեր ավետաբեր քայլերը դեպի հաջողություն ու խաղաղություն:

Երկար կյանք, արևոտ ու երջանիկ օրեր Ձեզի, մեր շատ սիրելի աստվածարյալ Հայրապետ»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջույնի խոսքեր են արտասանում Անգլիկան Եկեղեցու հարգարժան ներկայացուցիչները և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ԼՈՆԴՈՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան, Հ.Բ.Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի ատենապետ պր. Հարություն Մութաֆյանի բնակարանում տեղի է ունենում հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ: Հանդիպմանը ներկա էին Հ.Բ.Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի ղեկավար անդամներ և այլ հրավիրյալներ:

Հանդիպման ընթացքում բարիգալստյան և ողջույնի հուզիչ ու խանդավառ խոսքով առաջինը հանդես է գալիս հյուրընկալ տիար Հարություն Մութաֆյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր,

Սիրելի գործակիցներ և բարեկամներ,

Հատկանշական օր մըն է այս օրը, ինչպես նաև ուրախության՝ ընտանիքիս և ինձի համար, որ հիշել կուտա մեզի նմանօրինակ համարժեք ուրիշ առիթ մը, զոր ունեցանք 20 տարիներ առաջ նույն այս հարկին տակ: Ձերդ Սրբություն, հաճելի է խոկալ այն անցած օրերու մասին, երբ ներդաշնակության և իրարհասկացողության բարի ոգին կիշխեր գաղութիս մեջ: Իրապես ուրախ եմ, որ նույնանման ոգի մը կրկին կներթափանցե, գուցե, դանդաղորեն, գաղութիս կյանքեն ներս: Այս իրողությունը մեծապես կուրախացնե բոլորս՝ վստահություն ներշնչելով մեզի գալիք ավելի պայծառ օրերու մասին:

Հատկապես ուրախ եմ հայտնելու, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնդոնի մասնաճյուղը տևապես աճման մեջ է և ամենայն բարեխղճությամբ կկատարե իր պարտականությունները՝ պահպանելու համար մեր ազգային ժառանգությունները: Դժվարին առաքելություն մը, բայց ոչ անկարելի, մանավանդ երբ չեն պակսիր մեզի նվիրյալ կամավորներ, որոնք երբեք չեն ընկրկիր դժվարության առջև, որքան ալ մեծ ըլլան խոչընդոտները:

Մեր մասնաճյուղը կընդգրկե երկու նոր կազմակերպություններ Հ.Բ.Ը.Մ.-ի հովանիին ներքո: Առաջինը Լոնդոնի «ԹՐԱՍԹ»-ի ստեղծումն է, որուն նպատակն է որոնել եկամուտի նոր աղբյուրներ, քանի որ մեր նյութական պահանջները ավելի արագ կաճին, քան ներկա մեր նյութական կառուցվածքը կրնա արտոնել: Սույն «ԹՐԱՍԹ»-ի հաստատման շարժառիթը օգտվիլն է տուրքերու վեղչումի առավելութենեն, որ կշնորհվի տեղվույս «ԻՆԼԱՆՏ ՌԵՎԵՆՅՈՒ»-են բրիտանական օրինավոր բարեգործական հաստատությանց: Երկրորդը՝ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ կազմավորումն է, որուն առաքելությունը պիտի ըլլա պատրաստել մեր ազգային և կրոնական ավանդությանց պահպանման նախանձախնդիր երիտասարդ սերունդներ:

Ձերդ Սրբություն, կրնամ պարզորեն ըսել, որ «ԹՐԱՍԹ»-ի ստեղծումը օրհնություն մըն է և բացարձակ անհրաժեշտություն մը մեզի համար: Արդեն իսկ կքաղենք անոր պտուղները՝ ապահոված ըլլալով զգալի գումարներ, որոնք հիմքը պիտի հանդիսանան ապագայի մեր գործունեության ընդլայնման: Մեր բոլոր ուժերը պիտի ներդնենք, որպեսզի սույն «ԹՐԱՍԹ»-ը վերածվի ուժեղ գործիքի մը, որուն միջոցավ Լոնդոնի Հ.Բ.Ը.Մ.-ը կարելիությունը կունենա պայքարելու և գործելու ավելի մեծ վճռականությամբ՝ իրագործելու համար այն սուրբ նպատակները, որոնք ի խնդիրս դրվեցան առաջին ընդհանուր կանոնագրին մեջ, երբ Հ.Բ.Ը. Միության հիմնադիրները գեղեցիկ տեսիլքը ունեցան անոր ծննդյան՝ 1906 թվականի Սուրբ Զատկի առավոտը:

Մեր երիտասարդական կազմակերպության շարժումը, որ ծնունդ առավ երեք տարվա ծրագրված աշխատանքե վերջ, կենսական կարևորություն ունի մեզի համար, մեր անմիջական գոյության այս երկրին մեջ՝ գալիք տասնամյակներու ընթացքին: Մեր երիտասարդ սերունդը պետք է գիտակցի իր հայեցիության, սերտորեն կապված մնա մեր մշակույթին և դարավոր արժեքներուն, որպեսզի, վինված այդ անբեկանելի զենքերով, կարողանա գրավել գալիք սերունդներու հոգիները և հասկցնել իրենց, թե անոնք շառավիղներն են հնագույն ազգի մը, որ ավելի քան 4 000 տարվա պատմություն մը ունի իր ետին, և որ ինքնին պատճառ մըն է խորունկ ազգային հպարտության: Մենք վստահություն ունինք իրենց կարողության վրա, անոնք խանդավառ են և անհունորեն ջանասեր:

Ձերդ Վեհափառություն, Ամենակալին օգնությամբ մեր սիրելի Հ.Բ.Ը. Միությունը անսասան կանգնած Մայր Աթոռի կողքին, Ձերդ Սուրբ Օծության վերին հեղինակության ներքո, պիտի շարունակե բարգավաճիլ և ուժեղանալ աշխարհի զանազան երկիրների մեջ, ուր հայ գաղութներ կան, որոնք իրենք վիրենք հայ կնկատեն»:

Հանդիպման ընթացքում եղան կարևոր նվիրատվություններ ի շինություն և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Հայոց Հայրապետին ուղղված ջերմ ու սրտառուչ խոսքով հանդես եկավ նաև Հ.Բ.Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի քարտուղար պարոն Կարպիս Եսայանը:

«Վեհափառ Տեր,

Այս իրիկուն, մեր պատվական բարեկամներուն՝ իշխանուհի Հելենայի և պր. Հարություն Մութաֆյանի ազնիվ և սիրաջերմ հյուրամեծարությամբ քաղցրացած այս մթնոլորտին մեջ, կրկին անգամ գերագույն շնորհին կարժանանամ արտահայտելու Անգլիո Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մեծ ընտանիքին բոլոր անդամներուն որդիական սերը, ակնածանքը, հավատարմությունը և հրճվանքը Ամենայն Հայոց մեր սիրելի Վեհափառ Հայրապետին Իր հովվապետական այս օրհնաբեր այցին առիթով:

Մեր սրտագին շնորհակալությունները կհայտնենք Վեհափառ Հայրապետին Իր սրտապնդիչ և սփոփարար ներկայության, հոգեշահ քարոզներուն, օրհնություններուն և աղոթքներուն համար: Իր ներկայության կրգանք կենսախայտ գեղեցկությունը մեր վերածնած հայրենիքին և սուրբ խորհուրդը Էջմիածնին, և թափ տված մեր երևակայության՝ կքալենք դարերն ի վար մեր Մայր Եկեղեցվո պատմության մութ ու լույս ուղիներեն և կտեսնենք ամեն քայլափոխի լուսապայծառ դեմքերը մեր երանաշնորհ հայրապետներուն:

Երբ կանդրադառնամ, որ Վեհափառը այս տարի Իր գահակալության 28-րդ տարին պիտի բոլորե, կզգամ, թե որքան սրագ կթավալին մեր կյանքին օրերը: Որովհետև այսօրվան պես թարմ է հիշողությանս մեջ 1955 հոկտեմբերի այն կիրակին, Նիկոսիո Ս. Աստվածածին եկեղեցվո բակին մեջ, երբ առինք Ս. Էջմիածնեն կաթողիկոսական ընտրության ավետիսը և տեղեկացանք, որ ռումանահայոց բարեջան ու առաքինավարդ առաջնորդը՝ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, կամոքն Աստուծո և հայ ազգին, բալմեր էր սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռին վրա:

Բարեպաշտ, ուսյալ, տարեց բարեկամ մը ունեի, որուն հետ ամեն կիրակի վոյգ մը անուշ խոսք կփոխանակեինք մեր ազգային հարցերուն մասին և հայրենիքի նվաճումներուն խաբրիկները կուտայինք իրարու: Այդ օր, բարեկամս դարձավ ինծի և անծածկելի հուզումով մը ըսավ. «Տղա՛ս, կհավատամ հիմա, որ Աստված հայ ազգը կսիրե: Աստված երկար կյանք տա նոր Վեհափառին»:

Բարեկամս, Նոր Սիմեոն ծերունիի մը պես, տարի մը ետք հրաժեշտ տվավ այս կյանքին: Ան ցավով տեսավ մեր Եկեղեցիի երկփեղկումը, բայց բախտը չունեցավ տեսնելու բարիքները ատոր հաջորդող չորս անգամ յոթը առատության տարիներուն, Վեհափառ Հայրապետին իմաստուն, արդարակորով և մեծահոգի առաջնորդության տակ:

Այսօր, ի տես 28 տարիներու վրա տարածվող բազմարդյուն գործունեության մը սխրալի իրագործումներուն և Ձերդ Սուրբ Օծության եկեղեցանվեր և ազգանվեր աստվածահաճո գործերուն, Վեհափառ Տեր, բոլորս ալ կըսենք. «Կհավատանք հիմա, որ Աստված կսիրե հայ ազգը: Աստված երկար կյանք տա մեր սիրելի Վեհափառին»:

ՀԱՄԱ

Մեր հոգիները կցնծան, երբ կտեսնենք պայծառությունը, բարգավաճումը, ներքին վերակազմակերպումը մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և բարեկարգումի, վերանորոգումի և շինարարության գեղեցիկ թափը:

Մեր հոգիները կցնծան, երբ կտեսնենք հրաշալի վերելքը մեր վերածնած հայրենիքին, և մեր հայրենի պետության ու Մայր Աթոռի բարեկամական կապերուն հարաճուն ամրապնդումը՝ հիմնված փոխադարձ հարգանքի և վստահության վրա, և այն անխառն սերն ու խանդաղատանքը, որով մեր հայրենի ղեկավարությունը և ժողովուրդը կպարուրեն Ամենայն Հայոց Հայրապետը:

Մենք՝ Ձեր զավակները, կհրճվինք, երբ տարվե տարի կկորանան Մայր Աթոռի և սփյուռքի կապերը, և մեր թեմերը խաղաղ և ներդաշնակ պայմաններու տակ կկրկնապատկեն իրենց ճիգերը:

Մենք կհրճվինք, երբ կտեսնենք ստվարացումը մեր հոգևորականության և նվիրյալ, վարգացած եկեղեցականներու պատրաստության համար Վեհափառ Հայրապետին տարած անդուլ ջանքերը: Այս աշխատանքը շատ մոտ է մեր սրտին և՝ Հ.Բ.Ը.Մ.-ի Լոնդոնի Մասնաճյուղի Վարչությունը, որպես որդիական սիրո և հարգանքի արտահայտություն մը, սիրահոժար կերպով կստանձնե հոգալ կրթաթոշակը եկեղեցականի մը, որ հետևի աստվածաբանական կամ մանկավարժական բարձրագույն ուսման անգլիական համալսարանի մը մեջ:

Այս առթիվ մասնավոր զգացումով մը կուզեմ հայտնել մեր երախտագիտությունը Վեհափառ Հայրապետին, Գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիպիրյանի լոնդոնահայոց իբր առաջնորդ նշանակումին համար, մեր նախկին բարեջան առաջնորդ Գերշն. Տ. Ներսես եպիսկ. Պոլատյանի Մայր Աթոռ դիվանապետի բարձր պաշտոնին կոչվելուն առթիվ: Սրբազան հայրը նվիրված և ուսյալ եկեղեցական մըն է, որ իր բարեհամբույր բնավորությամբ և հայրական հավասարաբաշխ հոգածությամբ արդեն իսկ շահած է բոլորիս համակրանքն ու վստահությունը: Ան հայ մշակույթի իսկական բարեկամ մըն է, որ իր ներկայությամբ և հորդորներով քաջալեր կհանդիսանա մեր մշակութային գործունեության:

Վեհափառ Տեր,

Ձեր եկեղեցանվեր և ազգանվեր բեղուն կյանքին 75-ամյակին առիթով, Ձեր զավակները իրենց սրտերուն խորերեն Ձեզի քաջառողջություն և արևշատ օրեր կմաղթեն, որպեսզի Ձեր բարի և իմաստուն հովվապետության տակ Ձեր հոտը չորս անգամ յոթը առատության տարիներու նոր շրջան մը բոլորե, և Դուք իրենց լրումին հասցնեք Ձեր բոլոր բարի ծրագիրներն ու երազները:

Թող մեր պապերուն Աստվածը անսասան պահե մեր հավատքին միջնաբերդ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Թող մեր պապերուն Աստվածը մշտավառ պահե Լուսավորչի կանթեղը և թող անոր լույսը միշտ ցոլա ամեն հայու հոգիին մեջ:

Թող մեր պապերուն Աստվածը վերահաստատե միասնականությունը Արքելական մեր Մայր Եկեղեցիին, որպեսզի ան վերստին դառնա կեդրոնաձիգ, փրկարար, ոգեշնչող տիրական ուժը սփյուռքի հայության կյանքին: Սրտագին մաղթանքս է, որ Դուք շուտով տեսնեք այդ օրը:

Ձեր գալը բարի, հպար բարի, Վեհափառ»:

Վերջում օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով այն կարևոր և հայապահպան դերը, որ երկար տարիներից ի վեր կատարում է Հ.Բ.Ը. Միությունը սփյուռքի հայկական գաղթօջախներում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 9-ին, երկուշաբթի օրը, Լոնդոնի «Գորինգ» հյուրանոցում տեղի է ունենում հանդիպում Վեհափառ Հայրապետի և Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության ու «Աբգարյան ավանդ» հանձնաժողովի անդամների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվում են Լոնդոնի համայնքային կյանքին վերաբերող մի շարք կարևոր հարցեր:

Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետը տալիս է իր հայրական խորհուրդները և հայրապետական պատգամները:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, հանուն Լոս Անջելոսի հայ կրթական հիմնարկության, Վեհափառ Հայրապետին է այցելում Միհրան Բուխանյանը:

*
* *

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետը ընդունում է նաև այցելությունը լոնդոնաբնակ ազգայիններ տիարք Հայկ Գալուստյանի և Ասատուր Գյուլելյանի:

*
* *

Մայիսի 10-ին, երեքշաբթի օրը, Ս. Սարգիս եկեղեցու հովվատանը Վեհափառ Հայրապետին է այցելում պարսկահայ ազգայինների մի խումբ՝ գլխավորությամբ դոկ. Ռոստոմ Ստեփանյանի:

*
* *

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Հայկ Արթանի և պարսկահայ Ռաֆիկ Սահակյանի, որոնք կատարում են կարևոր նվիրատվություն Մայր Աթոռի պայծառության համար:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում նաև նախկին ռումինահայ տիար Վաչե Գարագաշյանը, ուր հատուկ եկել էր Յոհանսբուրգից՝ Մայր Աթոռի գրադարանին նվիրաբերելու հայերեն երեք հնատիպ Աստվածաշունչ մատյաններ:

*
* *

Ավելի ուշ Նորին Սրբությունը ընդունում է այցելությունը Ղպտական քույր Եկեղեցու քահանաներ հայր Անտոնիոս Ֆարագի և հայր Անտոնիոս Շեուդանի, ինչպես նաև հնչակյան կուսակցության մի խումբ անդամների՝ գլխավորությամբ տիար Զարեհ Ճերեճյանի:

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Նույն օրը, մայիսի 10-ին, երեկոյան ժամը 18.30-ին, Ս. Պետրոս եկեղեցուն կից սրահում տեղի է ունենում խորհրդակցություն՝ նախագահությամբ

Վեհափառ Հայրապետի: Խորհրդակցությանը մասնակցում են Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, ինչպես նաև Ս. Պետրոս եկեղեցու վարչության անդամները:

Խորհրդկցության ընթացքում քննարկվում է Լոնդոնի հայ համայնքի եկեղեցական կանոնադրության վերաքննության հարցը:

Խորհրդակցության ավարտին վարչության անդամները և տիկնանց հանձնախմբի անդամները Նորին Սրբությանը պատվում են ճաշկերույթով:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՃԵՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Մայիսի 11-ին, չորեքշաբթի օրը, Թեքեյան Մշակութային Միությունը Լոնդոնի «Ռոյել Գարդենս» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում է հանդիսավոր ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Սեղանի շուրջ առաջինը Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունում է Թեքեյան մշակութային միության վարչության անդամ, Լոնդոնի «Էրեբունի» թերթի խմբագիր դոկ. Անդրանիկ Ծուլիկյանը հետևյալ ճառով.

«Սրտի անհուն հրճվանքով է, որ այսօր կողջունենք Նորին Սրբություն Ամենայն Հայոց Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի ներկայությունը Թեքեյանական այս սեղմ և մտերմիկ ընտանեկան շրջանակին մեջ:

Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այս այցելությունով Լոնդոն, մեր սրտերը կողողվին Ս. Էջմիածնա լուսաճաճանչ ճառագայթներով և Հայաստան աշխարհի կենսահորդ ավիշով, և մենք սփյուռքի այս ափերեն մեր աչքերը հառած դեպի մեր վերածնած Մայր Հայրենիքը և հավատքի կեդրոն լուսաղբյուր Ս. Էջմիածինը, անգամ մը ևս կը լեցվինք հայկականությամբ և կուխտենք անվհատ կերպով շարունակել հավատքով, միտքով և էությամբ հայ մնալու, հայ ապրելու մեր պայքարը:

Վեհափառ Հայրապետ, ինչպես ծանոթ է Ձերդ Սրբության, Թեքեյան Մշակութային Միության գլխավոր հավատամքը և մշակութային գործունեությունը ամբողջ աշխարհի տարածքին կկայանա սփյուռքահայ կանգվածներուն և Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնի և վերածնած Մայր Հայրենիքի միջև կապը հաստատուն պահելու, որովհետև մենք, Թեքեյանականներս, խորապես հավատացած ենք, որ առանց հայրենիքի և Ս. Էջմիածնի կարելի չէ հայ պահել սփյուռքահայությունը: Հայրենիք և Ս. Էջմիածին միասնաբար կկազմեն այն ամրակուռ կռվանը, որուն ապավինելով է միայն, որ մենք սփյուռքի մեջ կրնանք պահպանել իբր հայ մեր գոյությունը:

Լոնդոնի Թեքեյան Մշակութային Միությունն ալ, իբրև մեկ օղակը համազգային Թեքեյան Միությանց շղթային, նույն ոգիով և նույն տեսիլքով առաջնորդված՝ կգործե Թեյմզի այս ափերուն և կփորձե հայ կանգվածներու մոտ վառ պահել սերը դեպի Մայր Հայրենիքը, հավատքը դեպի Ս. Էջմիածինը և պաշտամունքը դեպի հայ մշակույթը: Կազմված թվականես մոտ 7 տարիներ առաջ՝ Լոնդոնի Թեքեյան Մշակութային Միությունը հարաբերաբար այս շատ կարճ ժամանակամիջոցին հայ մշակույթին նվիրված իր գրական և երաժշտական երեկոներով, թատերական ներկայացումներով, արվեստի ցուցահանդեսներով, պատանեկան և երիտասարդական շարժումով, «Էրեբունի» ամսաթերթով դարձավ լոնդոնահայության ամենաժողովրդական և ամենագործունյա միությունը: Տակավին, ընդարձակելով իր գործունեությունը, Լոնդոնի Թեքեյան Մշակութային Միությունը մոտ ատենեն պիտի ունենա նաև իր կեդրոնը՝ «Թեքեյան Կեդրոն»-ը, որու գնման աշխատանքները արդեն բավական հառաջացած փուլի մեջ կգտնվին և որը այս գաղութին համար պիտի ըլլա, մեր եկե-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ղեցվո կողքին, հայապահպանման ամրոց մը և հայ մշակույթի փարոս մը: Մեր ջերմ փափագն է, Վեհափառ Հայրապետ, որ Ձեր հաջորդ այցելության Ձերդ Սրբությունը ընդունինք մեր հարապատ տան՝ «Թեքեյան Կեդրոն»-ին մեջ:

Վեհափառ Հայրապետ, թող օրհնաբեր ըլլա Ձեր այս այցելությունը: Մենք Ձերդ Սրբության կմաղթենք արևշատություն և առողջություն, որպեսզի տակավին երկար տարիներ առաջնորդեք Հայաստանյայց Եկեղեցին և շարունակեք Ձեր սկսած շինարար աշխատանքները ի փառս Ս. Էջմիածնի և հայ ժողովուրդին: Մեր մաղթանքն է նաև, որ Ձեր օրով իրականանա Հայաստանյայց Եկեղեցվո միասնականությունը:

Թող անսասան մնա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և անոր լույսը միշտ ճառագայթե մեր հոգիներեն ներս և լուսավորե մեր միտքերը, որպեսզի ըլլանք արժանի մեր պապերու ժառանգության:

Բարի եկաք, Վեհափառ Հայրապետ»:

Այնուհետև խոսք է առնում Թեքեյան Մշակութային Միության ատենապետ Կարո Գրիգորյանը, որը, խոսելով Հայաստանյայց Եկեղեցու դերի և նշանակության մասին հատկապես սփյուռքի տարածքի վրա, նշում է. «Կհավատանք, որ Հայաստանյայց Եկեղեցին մեր գաղութին միության մեծագույն ապդակն է: Մեր Եկեղեցին իր փառավոր անցյալով, մշակույթով, պատմությամբ և կոչումով իր մեջ կխտացնե հայ ժողովուրդը: Արտասահմանի հայը իր Եկեղեցիեն անջատված՝ իր գոյությունը կրնա կորսնցնել:

Ձերդ Սրբության սույն այցելությունը մեկ մեր հավատքին և ազգային պատկանելության մեջ կվերանորոգե: Ձեր բարի ու խոհեմ անձին մեջ մենք մեր հոգևոր աչքերով կտեսնենք Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և Ս. Ներսես Շնորհալին, Խրիմյան Հայրիկը և ամբողջ հրաշափառ հույլը Հայաստանյայց Եկեղեցվո սպասավորներուն»:

Ընդունելության վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, որն իր հայրապետական բարձր գնահատանքին է արժանացնում Թեքեյան մշակութային միության հայրենասիրական գործունեությունը ի նպաստ հայ մշակույթին ու դպրության՝ նրա անձնվեր ու ժրաջան անդամներին մաղթելով նոր ուժ, եռանդ և հարատևություն իրենց ջանքերում:

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԹԸՆ ՔՈՐԹԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Մայիսի 12-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 16-ին, «Համթըն Քորթ» պալատի «Արքայական մատռան» լուսարար կանըն Մայքըլ Մուրը կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Ողջունելով Նորին Սրբության և նրա շքախմբի ներկայությունը պալատում՝ կանըն Մայքլ Մուրը Վեհափառ Հայրապետին հանգամանալից բացատրություններ է տալիս Համթըն Քորթի պատմական նշանավոր պալատի մասին, որը ԺԶ դարից հանդիսանում է թագավորանիստ դղյակ:

Ապա պալատի «Արքայական մատռան» մեջ տեղի է ունենում էկումենիկ աղոթք:

Այնուհետև Համթըն Քորթի պալատի պաշտոնական ընդունելությանց սրահում թագուհու ներկայացուցիչ գեներալ Սըր Ռոդնեյ Մուրը հյուրընկալում է Վեհափառ Հայրապետին և թագուհու անունից բարի ողջույն մաղթում Նորին Սրբությանը:

Ընդունելությանը ներկա էին Համբրն Քորթի մնայուն բնակիչները՝ շուրջ 30 պաշտոնական անձինք:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը իր շնորհակալությունն է հայտնում ջերմ հյուրընկալության համար և մաղթում արևշատություն Անգլիայի գահակալ Նորին Պայծառափայլություն Էլիզաբեթ Բ-ին, նրա գործակիցներին և Մեծ Բրիտանիայի հավատացյալ ժողովրդին:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է «ԱՆԱՀԻՏ» ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայիսի 13-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Լոնդոնի «Անահիտ» տիկնանց միության անդամներին՝ գլխավորությամբ տիկին Հասմիկ Օհանյանի:

Այս առթիվ օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ գնահատելով միության կատարած ազգապահպան դերը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Լոնդոնի Քրիստոնեական գիտելիքների տարածման ընկերության նախագահ Պատրիկ Գիլբերտի հրավերով Վեհափառ Հայրապետը Լոնդոնի «Կոլոսիում» թատրոնում ներկա է լինում Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայի ներկայացմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Մայիսի 14-ին, շաբաթ օրը, Անգլիայի Հայ Մարմնակրթական Սկաուտական Միությունը կազմակերպում է հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ: Բացման խոսքով հանդես է գալիս սկաուտների ղեկավար Անահիտ Սարգսյանը, որը Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելուց հետո նշում է, որ հայ նոր սերունդը պետք է լավատեղյակ լինի պատմության ընթացքում և մեր օրերում Հայ Եկեղեցու դերի և նշանակության մասին: Նա պետք է սովորի իր ազգային դաստիարակության ընթացքում, որ Հայ Եկեղեցին հարազատ է և անբաժան իր ժողովրդից:

Այնուհետև, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, սկաուտների կողմից գործադրության է դրվում գեղարվեստական մի ճոխ հայտագիր:

Հանդիպման վերջում իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ նոր ուժ ու եռանդ մաղթելով հայ երիտասարդներին, որպեսզի իրենց հոգիներում միշտ վառ պահեն հայրենիքի սերն ու կարոտը, լեզվի պաշտամունքը և իրենց պապերի հավատքը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Ս. Սարգիս եկեղեցուն կից «Նվարդ Կյուլպենկյան» սրահում տեղի է ունենում գեղարվեստական հանդես Թեքեյան Մշակութային Միության պատանիների կողմից՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Հանդիսությունը բաց է անում Վարդան Ուլունյանը: Այնուհետև իրենց

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՎ ԵՎ ԱՐԵՆՈՒՇՆԵՐՈՎ

արտասանություններով ու երգերով հանդես են գալիս Հակոբ Զաքարյանը, Տիգրան Ավագյանը, Ռաֆֆի Ուլունյանը և ուրիշներ:

Պատանեկան սույն հանդիսությունը ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Լոնդոնի Համայնքային եկեղեցական վարչության և Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անունից Լոնդոնի «Ռոյել Գարդենս» հյուրանոցի շքեղ սրահում կազմակերպվում է համագաղութային պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Տ. Ներսես եպս. Պոլապալյանը, Տ. Դանիել վրդ. Շամլյանը, Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը, Տ. Հովնան աբեղա Տերտերյանը, Ս. Պետրոս եկեղեցու հոգաբարձության անդամները՝ գլխավորությամբ տիար Կարո Գրիգորյանի, Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անդամները՝ գլխավորությամբ տիար Սարգիս Քյուրքճյանի, լոնդոնահայ գաղութի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, վանական քաղաքներից ժամանած համայնքային և գաղութային վարչությունների անդամներ և բազմաթիվ լոնդոնաբնակ հյուրեր:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջույնի սրտառուչ խոսք է արտասանում Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը:

«Վեհափառ Տեր և աստվածարյալ Հայրապետ,

Գերաշնորհ և հոգեշնորհ եղբայրներ, Ս. Սարգիս և Ս. Պետրոս եկեղեցյաց պատվարժան հոգաբարձությանց հարգելի անդամներ և

Սիրելի սեղանակիցներ,

Ամեն անգամ, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այցելության կելլե արտասահմանի հայ գաղթօջախներե մեկուն, հավատացյալներու սրտերը, հրդեհվող անտառի նման, հոգևոր ուրախությամբ կլեցվին: Այդպես է պարագան Մեծն Բրիտանիո պարագային, երբ Հայոց Հայրապետը այցի եկավ կարգ մը պաշտոնական անձնավորություններու և իր հավատացյալ ժողովուրդին:

Բազմաթիվ անգամ ըսված և կրկնված է (կրկնությունը ճշմարտություն մը չի թառամեցներ) այն մասին, թե Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ կուգա Հայոց աշխարհեն, մեր սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, Իր մեջ կանձնավորե մեր հայրենիքը, մեր սրբությունները, մեր արժեքները: Շուրջ տասը օրերե ի վեր Ձեր մեջ կգտնվիմ և երբեք ինքզինքս օտար չզգացի, ոչ թե որովհետև ձեզմե շատերը կճանչնայի, այլ որովհետև մենք նույն և մեկ ծառին ճյուղերն ու տերևներն ենք, սիրո ավիշով կապված արմատներուն, մեր հայրենիքին:

Ուր որ ալ գտնվին հայ գաղթօջախները, Գանգեսի թե Նեղոսի, Դանուբի թե Թեյմզի ափերուն, կապրին, կշնչեն, նույն ոգիով կերակեն մեր հայրենիքը և Ս. Էջմիածինը:

Ինձի հետ կբերեմ առ ոտս Ձերդ Վեհափառության, սիրելի Հայրապետ մեր, եգիպտահայ մեր տիրախնամ գաղութի և Ափրիկյան ցամաքամասի վրա սփռված հայ համայնքներու Ձեր վավակներուն խոր սերը, հարգանքն ու հավատարմական զգացումները:

Գաղափարաց զուգորդությամբ, քանի որ կանձնավորեք մեր Հայոց աշխարհն ու անոր սրբությունները, մեր միտքը կերթա մեր հայրենիքին: Երբ նայինք քարտեզին, հատկապես Մերձավոր Արևելքի երկիրներուն, որոնք նույնիսկ հարևան երկիրներ են Հայաստանի, կտեսնենք ամեն տեղ կռիվ, պատերազմ,

ավեր: Իրոք երջանիկ ենք, որ մեր երկրի սահմանները անվտանգությամբ պաշտպանված են: Հայաստանի մեջ կմտածեն միայն շինարարության և հառաջդիմության մասին: Կար ժամանակ, երբ մեր պատանիներն ու երիտասարդները կմեկնեին ծանոթ երկիրներու մայրաքաղաքներու համալսարանները: Ներկա ժամանակներուն, ամեն կողմե հայ տղայք և աղջիկներ մեր մայրաքաղաքը՝ Երևան կմեկնին ուսանելու: Կայ ժամանակ, երբ մեր պատմության, մատենագրության գրքերը լույս կտեսնեին արտասահմանի վանական երկիրներու հայ գաղթօջախներու մեջ, մինչ ներկայիս արտասահմանի հայ գրողներու գրքերը կտպվին Երևանի մեջ: Ի դեպ, արժեքավոր գրքեր կտպագրվին տասնյակ հազարավոր տպաքանակով: Դարեր շարունակ, երբ ականջալուր եղած ենք հայոց պատմութենեն իմացվող ձայներուն, լսած ենք շարունակ մեր ազգաշեն նախարարական տոհմերուն, հայոց աշխարհագորի ու այրուձիի մարտերու շաչյունն ու շառաչյունը, դոփյունն ու մարտագոռը: Շատ անգամ պատրված, երբեմն հաղթական, բայց ներկայիս Հայոց աշխարհին մեջ կիմացվի միայն շինարարության խաղաղ աղմուկն ու ձայնը. կկառուցվին ջրանցքներ, բարեկամության և մշակույթի պալատներ, գեղեցկի և ուսումնառության բարձրագույն հաստատություններ: Կար ժամանակ, երբ Հայոց աշխարհի երկինքը կմթագներ խոշոր աղետներու վաղահաս սպառնալիքով, այժմ մեր երկինքեն վանական չվացուցակներով ճամփորդատար օդանավեր կանցնին և գիտնականներ երկինքի աստղերուն մասին նոր տեսություններ կիղանան: Ահա այսպիսի մտածումներ Նորին Վեհափառության անձը կներշնչե մեզ բոլորիս: Առաջին անգամը չէ, որ ներկա կըլլամ Իր հետ իբրև Իր շքախումբի մեկ համեստ անդամը Իր այցելության: Կրնամ ըսել հավաստի կերպով, որ մենք տեսանք և կվկայենք, թե ինչ հոգևոր ցնծություն, ինչ խանդավառություն կստեղծվի ամեն անգամ Իր բարձր ներկայությամբ ամենուրեք, թե՛ ի սփյուռս աշխարհի ցրված հայ գաղութներու մեջ և թե՛ ի Հայաստան, մեր լուսաբաղձ ժողովուրդի վավակներուն համար:

Շատերդ անդամներ եք վանական միություններու և կազմակերպություններու, ունիք ձեր տեսակետներն ու կարծիքները վանական հարցերու նկատմամբ: Կարելի չէ պահանջել, որ ամեն մարդ նույն տեսակ մտածելակերպ ունենա: Բայց ամենքս ալ անդամ ենք մեր մկրտությամբ Հայաստանյայց Եկեղեցիին, որ 1700 տարիներե ի վեր հայ ժողովուրդին ամենեն մեծ, կարևոր, փրկարար հաստատությունն է: Առանց Հայ Եկեղեցիին հասկնալի չէ հայ ժողովուրդ: Առանց հայ ժողովուրդի ալ Հայ Եկեղեցին գոյություն չի կրնար ունենալ: Հետևաբար, երբ կմտնենք Հայ Եկեղեցիեն ներս, դուրսը կձգենք մեր բոլոր տարակարծություններն ու տեսակետները: Հայ Եկեղեցիին մեջ կպգանք մանավանդ, թե մենք մեկ ենք, մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ ենք և մեր հավատքի կեդրոնն է սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Շատ անգամ մեր համայնքի եկեղեցիին պայծառության իսկ համար վեճեր կունենանք իրարու հետ, որոնք մեզ կտանին մինչև սրտաբեկության: Հապա ի՞նչ ըսենք Վեհափառ Հայրապետին, որ բոլոր հայ եկեղեցիներու պայծառության մտահոգությունը ունի: Մենք տեսանք և կվկայենք, թե մեր Հայրապետը անմնացորդ վոհողությամբ տիվ և գիշեր կտքնի Հայաստանյայց Եկեղեցվո առավել պայծառության և հառաջդիմության համար: Բնավ պարագայական չէ, որ ներկա ժամանակներուն, հայ ժողովուրդի՝ արդիական կյանքի բոլոր բնագավառներուն մեջ ձեռք ձգած հաջողություններուն հետ Հայաստանյայց Եկեղեցին ալ հետզհետե ավելի պայծառանար: Այդ մենք կպարտինք Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի իմաստուն, շրջահայաց, խոհական, ան-

դով ջանքերուն թե՛ շինարարական և թե՛ հոգևոր կյանքի վերաբերմամբ: Ամենքդ ալ կրնաք վկայել այս մասին, երբ այցելեք Մայր Աթոռ և տեսնեք կատարվածը և իրագործվածը այնտեղ:

Ժամանակն է այլևս, որ դուրս գանք մեր նկուն դիրքեն, հպարտ ըլլանք մեր հոգևոր և մշակութային արժեքներով: Սիրելի սեղանակիցներ, պետք է մտածել այնպես, ինչպես պետություն ունեցող ժողովուրդներ: Շատ կարևոր է ունենալ պետական մտածողություն:

Այսօր վերջին ընթրիքն է, որ լոնդոնահայությունը սիրով և ցնծությամբ կվայելե՝ Վեհափառ Հայրապետին հետ սեղանակցելով: Երկու օրեն կմեկնի Փարիզ:

Այս աշնան, պաշտոնապես Ս. Մյուռոնի օրհնութենեն ետք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, պետք է հանդիսադրվի Վեհափառին կենաց 75-ամյակը: Շուրջ 30 տարիներե ի վեր Ան կգահակալե Ս. Լուսավորչի հայրապետական Աթոռին վրա: Կմնա մաղթել մեր սրտերու հրայրքով, որ Աստված երկար կյանք և առողջություն տա Իրեն: Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված «Շնորհալարդ պայծառացնե մեր սիրեցյալ Հայրապետի իշխանության գավականը»:

Վեհափառ Տեր, կարճ ժամանակ մը ետք պիտի մեկնիք: Կմաղթենք, որ բարով երթաք, հաջողություն ունենաք, վարդով երթաք, փառքով երթաք»:

Ճաշկերույթին ողջույնի խոսքերով հանդես են գալիս նաև Տ. Եղիշե եպիսկոպոս Կիպիրյանը, Մանչեստրի հայոց եկեղեցու հոգաբարձության անդամ Թադեոս սրկ. Գուլիկյանը, Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության անունից՝ պր. Ջորջ Քյուրքճյանը և ուրիշներ: Բոլոր սրտահայտվողներն էլ հայտնում են իրենց ուրախությունը, որ Վեհափառ Հայրապետի այցելությունը նոր կյանք, նոր ոգևորություն է ներշնչել Լոնդոնի հայ գաղութի կյանքին՝ նրա հետագա բարգավաճման և ծաղկման համար:

Ընդունելության ընթացքում գործադրվում է նաև գեղարվեստական ամփոփ մի ծրագիր: Ջութակահար Հարություն Բեդելյանը կատարում է Կոմիտասի «Կաքավիկը», «Կռունկը» և Բելա Բարթոկի վեց հունգարական պարերը:

Ճաշկերույթի ավարտին Վեհափառ Հայրապետը ներկաներին տալիս է Իր օրհնությունն ու հայրական պատգամները:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 15-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագ է մատուցում Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը:

«Հայր մեր»-ից առաջ հուզումնալից մթնոլորտում քարոզ է խոսում Նորին Սրբությունը՝ մխիթարելով հայրենիքից հեռու ապրող հայ հավատացյալ ժողովրդին:

Հավարտ ս. պատարագի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն վասն հոգվո խաղաղության անմոռաց Նորմա Քյուրքճյանի, նրա մահվան երկրորդ տարելիցի առթիվ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՎՈՐԳ ԹԱՀԹԱՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Լոնդոնի Գևորգ Թահթայան կիրակնօրյա վարժարան՝ ներկա լինելու իր պատվին կազմակերպված հանդիսությանը:

Աշակերտության անունից Նայիրի Ծատուրյանը արտասանում է բարի-գալստյան հետևյալ հուլիչ խոսքը.

«Վեհափառ Հայրապետ,

Լոնդոնի Գևորգ Թահթայան կիրակնօրյա հայկական վարժարանի աշակերտության կողմից պատիվ ունեմ որդիական ջերմագին սիրով ողջունելու ուրախառիթ Ձեր այցը մեզ՝ աշակերտներիս:

Հայրենի ափերից հեռու, աշխարհի չորս ծագերում, հայկական վարժարանները այն լուսավոր տաճարներն են, որտեղ հայ նորահաս սերունդները սովորում են իրենց մայրենի լեզուն, ծանոթանում հայկական մշակույթին ու պատմությանը՝ իրենց մեջ վառ պահելու համար ազգային ոգին:

Մենք ևս, հայրենիքից հեռու, բայց հայրենի կարոտը մեր սրտերում, ջանում ենք մեր հոգում վառ պահել Լուսավորչի կանթեղը: Այդ գործում մեծ հոգատարություն են ցուցաբերում մեր ուսուցիչները:

Շաբաթը մեկ անգամ ի մի հավաքված մեր ուսումնարանում, առավոտյան «Հայր մեր»-ով վերահաստատում ենք մեր հավատքը, սովորում հայկական գիր ու գրականություն, ծանոթանում մեր ազգի պատմությանը և այսպես սնվում հայկականությամբ:

Վեհափառ Տեր, մեր ջերմ փափագն է օրերից մի օր լինել Հայաստանում, այցելել Օշական՝ խոնարհվելու Մեծ Սուրբի դամբանի առջև, ուխտի գնալու մեր հոգևոր կենտրոնը՝ Սուրբ Էջմիածին, նաև Ծիծեռնակաբերդ՝ հարգելու մեր մեկ և կես միլիոն նահատակների հիշատակը և գնալ Սարդարապատ՝ ականջալուր լինելու քաջերին կանչող զանգերի ղողանջին:

Այսօր մեր բոլորի սրտերը լցված են մեծ հրճվանքով Ձեր օրհնաբեր այցելության համար, այցելություն, որն ավելի ևս կամրապնդի մեր կապը հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Բարի՛ եկաք, հապսար բարի»:

Այնուհետև գեղարվեստական ճոխ ծրագրով հանդես են գալիս դպրոցի աշակերտներն ու աշակերտուհիները՝ կատարելով ազգային հայրենասիրական երգեր, արտասանելով հայ բանաստեղծների քերթվածներ:

Առանձնապես հուլիչ էր Արփի Ներսեսյանի կողմից ապրումով արտասանված հետևյալ գողտրիկ քերթվածը.

ԵՍ ՀԱՅ ՏՂԱ Մ'ԵՄ

Ես հայ տղա մ'եմ կարմեն հայկազուն,
Կխոսիմ Հայկին, Արամին լեզուն,
Չունիմ թագ, ոսկի, գահ և ադամանդ,
Բայց սիրտս հարուստ է, պարկեշտ մանավանդ:

Վառված եմ ազգիս սիրով կաթոգին,
Իմ մեջս կապրի քաջերու հոգին
Եվ նախնիքներուս հուրը սրբական,
Զոր չեմ տար երբեք գանձերու փոխան:

Թեպետ տարագիր, թեպետ հալածված,
Չի մուրար երբեք հայը մեկե հաց,
Իր կարդն է ճակտին քրտինքը մաքուր
Եվ իր հովանին՝ հավատքն երկնատուր:



ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Գեղարվեստական ծրագրի կատարումից հետո հետևյալ բովանդակալից խոսքով հանդես է գալիս Լոնդոնի Հայ եկեղեցական խորհրդի մշակութային մարմնի ատենապետ պր. Հարություն Այվազյանը.

«Վեհափառ Տեր,

Ինչպես ամբողջ լոնդոնահայության համար, նույնպես Գևորգ Թահթայան կիրակնօրյա ազգային վարժարանի համար պատմական սիրելի թվական մը պիտի մնա 1983-ի մայիսի 15-ը:

Մեր սիրելի վավակներուն մտքերուն մեջ անջնջելիորեն դրոշմած պիտի մնա այսօրվան հիշատակը և պիտի գեղեցկացնե իրենց կյանքը: Անոնք արդար հպարտությամբ պիտի հայտարարեն, թե իրենք պատիվն ու առանձնաշնորհումը ունեցեր են Հայոց Հայրապետը տեսնելու. ո՛չ Անոր նկարը, այլ՝ նույն ինքն Վեհափառը: Անգլիախոս Լոնդոնի մեջ անոնք հայերեն երգեր երգեցին Վեհափառին համար, և Վեհափառը ժպտեցավ իրենց: Երբ որ մեծնան, անոնք պիտի հասկնան, որ Վեհափառի ժպիտը ցոլացումն է եղած բալմաչարչար ազգի մը ժպիտին, անոր գոյատևելու կամքին և լավատեսության:

Մեր անկեղծ մաղթանքն է, որ մեր մատաղ սերունդի այս փոքրիկ ներկայացուցիչները, երբ մեծնան ազգային առողջ դաստիարակության մը բալիքով և դիրք գրավեն գաղութիս մեջ որպես պատասխանատու անհատներ, անոնք որդեգրեն այն ճիշտ ուղին և ազգաշեն գործելակերպը, որ ազգիս Վեհափառին ժպիտ կպատճառե, և սխալ ազգավնաս համարեն այն ընթացքը, որ կնճիռներ հառաջ կբերե Անոր սուրբ ճակտին վրա:

Թահթայան վարժարանի շրջանակը մեծապես ուրախացավ, երբ Վեհափառի շնորհաբեր ժամանումեն իսկ առաջ հասավ մեկի ավետիսը, թե Նորին Սուրբ Օծությունը փափագ հայտնած է վարժարանն այցելելու: Մենք չկարմացանք, որովհետև գիտեինք, որ Խրիմյան Հայրիկի հմուտ ուսումնասիրողը, «Պապիկ և թոռնիկ»-ի հեղինակին հիացողը և իր բարեմասնություններով այնքան անոր նմանողը պիտի չմոռնար Լոնդոնի իր թոռնիկները:

Վեհափառ Տեր, Թահթայան վարժարանը ծնունդ առավ դարերով նվիրագործված այն հաստատ համոզումին, թե Հայ Եկեղեցվո կողքին և անոր հովանիին տակ հայ դպրոցի գոյությունը բացարձակ անհրաժեշտություն է:

Դպրոցական աշխատանքը սկսավ Ս. Պետրոսի նեղլիկ սրահներուն մեջ ութ ուսուցիչներու բծախնդիր հսկողության տակ արևելահայերեն և արևմտահայերեն զուգահեռ բաժիններով: Շուտով դասարանները սկսան հորդիլ, և աշակերտները փոխադրվեցան ավելի լայն հարմարություններ ունեցող այս վայրը:

Մեր վարժարանը հիմա հինգ տարեկան վառվռուն երեխա մըն է և կշարունակե իր բնականոն աճումը գուրգուրալիր հոգածության տակ պարտաճանաչ տնօրենության և ուսուցչական կազմին, անխոնջ ծնողական հանձնախումբին և համայնքային եկեղեցական խորհուրդի մշակութային մարմնին:

Այս հինգ տարիները կներկայացնեն գաղութիս մեջ համագործակցության հաղթանակը: Լոնդոնահայությունը գնահատեց կատարված աշխատանքը և զորավիգ կանգնեցավ իր վարժարանին: Սկզբնական շրջանին համայնքային եկեղեցական խորհուրդը հոգաց բոլոր ծախսերը, բայց կրնանք հպարտությամբ հայտարարել, որ դպրոցը ներկայիս գրեթե ինքնաբավ է:

Բայց մենք չենք գոհանար այսքանով: Անհրաժեշտ կարիքն ունինք լայն հարմարություններով օժտված շենքի կամ շենքերու, ուր կարելի ըլլա հաստատել նաև ամենօրյա վարժարան: Լոնդոնահայությունը կազմավորվելու ընթացքի մեջ եղող գաղութ մըն է: Հետևաբար պետք է ունենալ իմաստությունը որո-

նելու և գտնելու միություն հառաջացնող ապդակներ, համերաշխության կռվանները: Արդ, չկա միություն և իրարհասկացողության ավելի վստահելի խարիսխ ու կռվան, քան Հայ Եկեղեցին և հայ դպրոցը անոր կողքին և հովանիին տակ:

Բարեբախտաբար ունինք բարեջան հոգևոր հովիվ և առաջնորդ մը, հանձին հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Եղիշե եպս. Կիպիրյանի, որ ջերմ հավատացող մըն է հայ մշակույթի այս գաղութին մեջ կատարելիք դերին: Սրբազանը առաջին իսկ օրեն հետաքրքրվեցավ դպրոցով, քաջալերեց մեզ և ըրավ շինիչ թելադրություններ: Բոլորվինք իր շուրջը և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ գործակցության մթնոլորտի մը մեջ աշխատինք հաջողցնել գաղութիս կրթական առաջադրանքը սեփական շենք ունենալու և ամենօրյա վարժարան հաստատելու:

Մեր սիրասուն կավակներուն հայու արյան իրավունքն է այս, Վարդանի թոռներու արդար ժառանգությունը: Թող անոնք հայկականություն բուրող քաղցրիկ մթնոլորտի մեջ ըմբոշխնեն մեր մեծասքանչի բարիքը, հայ գիրին պաշտամունքը. թող անոնք սորվին, որ իրենց նախնիքները ստեղծած են լեզու մը, որ աշխարհի հրաշալիքներեն է:

Մեր կավակներուն առջև թող բացվի հայուն մշակութային հարստության թանգարանը, որպեսզի, ծանոթանալով մեր իրավ արժեքներուն, ամրանա իրենց մեջ այդ արժեքները ստեղծող ժողովուրդին պատկանելության հպարտությունը, որպեսզի գիտակից նվիրումով մը կարենան լայն բանալ իրենց հոգիները Ս. Էջմիածնի կանթեղեն ճառագայթող կենարար լույսին և ջերմության, որպեսզի անխորտակելի դառնա իրենց հավատարմությունը հայության վերածնած հայրենիքին:

Կսիրենք հուսալ, որ այս գաղութին մեջ պիտի գտնվին ալնվահոգի և ազգասեր հայեր, որոնք պիտի ուզեն իրենց նյութական միջոցները տրամադրել հաջողցնելու համար լոնդոնահայության կրթական ճիգը: Եվ այս լավագույն նվերն է, որ լոնդոնահայությունը կրնա տալ սիրելի Վեհափառին:

Վեհափառ Տեր, Ձեր Սուրբ Օծության շնորհաբեր այցելությունը ավելի շոշափելի և մնայուն կերպով նշելու համար համայնքային եկեղեցական խորհուրդի մշակութային մարմինը որոշեց մի քանի վկայագիրներ տալ ուսուցչական կազմի անդամներուն՝ գնահատելով մեր տնօրենին և ուսուցիչներուն անսակարկ ծառայությունը: Պիտի խնդրեինք, որ անոնք վկայագիրները ստանան Ձեր Սուրբ Օծության ձեռքեն»:

Ապա դպրոցի վաստակաշատ ուսուցիչ-ուսուցչուհիներին Վեհափառ Հայրապետի ձեռամբ վկայագրերի բաշխումից հետո շնորհակալական հետևյալ խոսքով հանդես է գալիս վարժարանի տնօրեն դոկտ. Հովհաննես Ավագյանը.

«Վեհափառ Հայր,

Վարժարանիս ուսուցչական կազմի կողմից պատիվ ունեմ մեր խորին շնորհակալությունը հայտնելու Ձերդ Սրբությանը, որ այցելեցիք մեզ ու Ձեր ձեռքով բաժանեցիք այս վկայագրերը:

Մեր դպրոցը իր հնգամյա գոյության ընթացքում կազմավորվել և բարգավաճել է այն աստիճան, որ այսօր այն դարձել է մեր գաղութում նշանակալից ուսումնական մի հաստատություն, ուր հայեցի կրթություն ու դաստիարակություն են ստանում մեր նորահաս սերունդները: Այս հաջողության համար մենք պարտական ենք ամենից առաջ մեր ուսուցիչների անձնվեր աշխատանքին:

Լոնդոնահայ գաղութը բաղկացած է գլխավորապես Հեռավոր, Միջին և Մերձավոր Արևելքի տարբեր երկրներից գաղթած հայ ընտանիքներից: Վերջին հինգ-տասը տարիների փորձառությունը ապացուցեց մեզ, որ կիպրահայը կա-



ԼՈՆԴՈՆԻ ԳԵՎՈՐԳ ԹԱՀԹԱՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑԻ ԵՐԿՍԵՌ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

րող է համերաշխորեն գործակցել հնդկահայի հետ, հնդկահայը՝ լիբանանահայի հետ, լիբանանահայը՝ պարսկահայի հետ, պարսկահայը՝ իրաքահայի հետ և այլն: Մեր մատաղ սերնդի ապագայով մտահոգված՝ մենք բոլորս ձեռք-ձեռքի տված մեր կարելին ի գործ ենք դնում՝ պաշտպանելու համար մեր փոքրիկներին ձուլման վտանգից և սնելու նրանց հայրենասիրությամբ:

Վեհափառ Տեր, ուրախ եմ հայտնելու Ձեզ, որ ուսման և մշակույթի բնագավառում գոնե միասնական գործունեությունը ոչ միայն կարելի է, այլև շատ դրական արդյունք է տալիս: Լոնդոնի մեր նոր համայնքը կազմող հայերի կրկնակի տարագրությունը գուցե խթան է եղել վարգացնելու այն նոր մտայնությունը, թե բոլորս էլ հայ ենք: Մեր ուսուցչական կազմը և վստահ եմ նաև բոլոր ծնողները, որոնք այսօր հավաքված են այստեղ, ջերմորեն փափագում են, որ կրթական գործունեության այս նվիրական բնագավառում միասնաբար շարունակենք աշխատել՝ ավելի ևս վարգացնելու գաղութիս այս ուսումնական հաստատությունը: Հուսով ենք նաև, որ համայնքի բոլոր անդամները հետևողականորեն քաջալեր և նեցուկ են հանդիսանալու լոնդոնահայ եկեղեցական խորհրդի նախաձեռնությամբ ստեղծված այս սրբական հաստատության:

Այս ոգով է, Վեհափառ Տեր, որ գալիս ենք լսելու Ձեր հայրական խրատներն ու հորդորները և խոնարհաբար ստանալու Ձեր հայրապետական օրհնությունը»:

Հանդիսության ավարտին իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը:

Նորին Սուրբ Օծությունը շեշտում է կարևորությունը հայկական դպրոցների գոյության՝ սփյուռքի պայմանների մեջ: Հայկական դպրոցներում է, որ պետք է վառ պահվի հայոց լեզվի սերն ու հայրենի հավատքը հայ մանկանց հոգիներում: Վեհափառ Հայրապետը նշում է նաև, որ առանց հայերեն լեզվի իմացության և հայրենի հավատքի պահպանման՝ սփյուռքի հայությունը կօտարանա, կձուլվի, կոչնչանա:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Լոնդոնի «Ռոյել Գարդենս» հյուրանոցի ճաշասրահում Լոնդոնի հայոց համայնքային վարչությունը կազմակերպում է համագաղութային ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի, թամադայությամբ տիար Ռոստոմ Ստեփանյանի:

Ընդունելությանը ներկա էին Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Տ. Ներսես եպս. Պոլատյանը, Տ. Դանիել վրդ. Շամլյանը, Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը, Տ. Հովնան աբեղա Տերտերյանը, Լոնդոնի Ս. Սարգիս և Ս. Պետրոս եկեղեցիների վարչության անդամները, ազգային տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, վանական քաղաքներից ժամանած համայնքային և գաղութային վարչությունների անդամներ և բազմաթիվ լոնդոնաբնակ հայեր՝ շուրջ 500 հոգի:

Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջերթի խոսքով առաջինը հանդես է գալիս Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը:

Ապա խնամված գեղարվեստական ծրագրով ելույթ է ունենում Լոնդոնի «Արարատ» երգչախումբը՝ ղեկավարությամբ պր. Հովսեփյանի:

Գեղարվեստական ծրագրի կատարումից հետո սրտառուչ խոսք է ասում Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,

Սիրելի ներկաներ,

Անցյալ տարի, ճիշտ այս օրերին, մայիսի 8-ին, Քենսինգթոնի «Ռոյել Գարդենս» հյուրանոցի այս պերճաշուք սրահում լոնդոնահայ համայնքի անունից ողջերթի ճաշկերույթ տրվեց Լոնդոնի հայոց նախկին առաջնորդի՝ իմ համեստ անձի պատվին:

Տասը տարիներ ծառայելուց հետո այստեղ և մոտիկից առնչված լինելով ձեր հոգևոր ու ազգային կյանքին ու գրեթե ձեր բոլորի առօրյային՝ ինձ համար այն ժամանակ անկասկած դժվար եղավ բաժանվել ձեզանից: Ես այդ առթիվ խոստացա ապագայում վերստին այցելել ձեզ:

Փառք եմ տալիս Բարձրյալին, որ իմ այդ փափագն իրականացավ: Եվ եթե մեկ կողմից ձեզ վերստին տեսնելու ցանկությունն էր ինձ մղում Լոնդոն, մյուս կողմից Նորին Սրբության շքախմբի անդամը լինելու իմ հանգամանքը կրկնապես հաճելի էր դարձնում իմ այս այցելությունը:

Ինձ թվում է, որ ձեզանից ոմանց համար հավանաբար Հայաստանը Կովկասյան լեռների ծոցում ծվարած և գրեթե մոռացված ու անհայտ մի անկյուն է, որտեղ կյանքն ընթանում է նախնական ձևով, որտեղ անցյալն է միայն տիրապետում, և ժամանակը թավալվում է հին հանկերգով՝ կտրված ներկա քաղաքակրթության պարգևած բարիքներից, երբեմն էլ՝ չարիքներից:

Սիրելիներ, իրականությունը սակայն բոլորովին տարբեր է: Հայրենի ներկա իրականության լավագույն ապացույցը Նորին Վեհափառության ներկայությունն է ձեր մեջ ի նշան ձեր նկատմամբ իր ունեցած հայրական հոգատարության և հետաքրքրության: Վեհափառը, ի սեր Լոնդոնի իր փոքրիկ հոտի, պատմական հայրենի երկրից, հեռավոր Սուրբ Էջմիածնից եկել է տեսնելու ձեզ, բերելու իր հոգևոր կավակներին ողջույնը հայրենի ժողովրդի և օրհնությունը քրիստոսահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Նա մշտարթուն պահակն է Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղի և լուսարարը նրա: Նա թեև ապրում է Ս. Էջմիածնում, սակայն իր մտածումներով և զգացումներով ի սփյուռս աշխարհի ցրված իր հավատացյալ որդիների և դուստրերի հետ է:

Մեր ժողովուրդը ամենայն իրավամբ նրան կոչեց «Շինարար Հայրապետ»: Արդարև, նա կերտեց և վերաշինեց տաճարներ, պալատներ, թանգարաններ, վանատներ և գանձատներ, անընդմեջ քսանութ տարի իր շնչով և բարձր իմացականությամբ կրթեց ու դաստիարակեց սերունդներ հոգևոր ճեմարանի հարկի տակ և իր շնորհաց շտեմարանից հոգևոր սնունդ ջամբեց Հայ Եկեղեցու բակում սպասավորներին:

Նա եղավ նաև քսաներորդ դարի էկումենիկ ոգու ջատագովներից մեկը, Հայ Եկեղեցու անունը բարձր պահեց և այն տարավ մինչև հեռավոր ափեր: Միջեկեղեցական կապեր ստեղծեց, հյուրընկալվեց քույր Եկեղեցիների հոգևոր պետերից, հյուրընկալեց նրանց Հայ Եկեղեցու հարկի տակ և եղբայրության ու խաղաղության ոգին տարածեց ամենուր:

Ամեն երեկո Նորին Սրբությունը քայլում է Էջմիածնի սուրբ տաճարի շուրջը, լուռ վրուցում և հոգևին հաղորդվում է անցյալի հետ, գիշերվա խոր լռության մեջ: Ահա այնտեղ, այդ խորհրդավոր պահերին է, որ նրա մտքում ծնունդ են առնում նոր գաղափարներ, նոր տեսիլքներ, այնտեղ է, որ նա՛ և՛ ցնծում, և՛ մտահոգվում է իր ժողովրդի ապագայով, հայ սփյուռքով:

Վեհափառ Տեր, թույլ տվեք մատչիլ ի համբույր Ձեր Սուրբ Աջույն՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն և երկար, արդյունավետ կյանք: Թող բարին Աստ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

ված լսի մեր աղերսը և մեր հոգևոր Հորը պարգևի բավում ամս ուղիղ վարդապետության՝ վարելու համար Հայ Եկեղեցու նավը այս ալեկոծ կյանքի օվկիանի մեջ՝ ապահով և անփորձանք:

Հայ ժողովուրդը տեսիլքի ժողովուրդ է, և Հայոց Հայրապետը՝ առաջնորդը նրա: Նա իր օրինյալ գավազանով, նմանյալ Մովսեսի, անպայման կհասցնի մեկ իր տեսիլքների և իդեալների գեղեցիկ ու երջանիկ աշխարհը»:

Ճաշկերույթի ընթացքում խոսք է առնում նաև սեղանապետ դոկտ. Ռոստոմ Ստեփանյանը՝ ասելով.

«Վերջին տասն օրերի ընթացքում Վեհափառ Հայրապետը եկեղեցու բեմից, պաշտոնական հանդիպումներում և անպաշտոն հավաքույթներում փոխանցեց մեկ իր մտածումները, զգացումները, հանձնարարությունները և ակնկալիքները:

Պարզ և հստակ կերպով Նորին Սրբությունը վերահաստատեց այն անառարկելի ճշմարտությունը, որ հայ ազգը մեկ է, ունի **մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի, մեկ մշակույթ** և **մեկ դատ:**

Նա պարտականություն դրեց մեր վրա՝ վերահաստատելու մեր ազգային-հասարակական կառույցը, դնելու այն մեկ հարազատ ժողովրդավար հիմունքների վրա, հեռու ընտանեկան, հատվածական և կուսակցական մենաշնորհներից:

Նա պատգամեց մեկ միասնաբար նշել տարեկան առնվազն երեք տոնակատարություններ համազգային չափանիշով.

Ա. Վարդանանց ճակատամարտի հիշատակը.

Բ. Մեծ Եղեռնի բյուրավոր նահատակների օրը.

Գ. Մայիսյան համաժողովրդական ընդվզումը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ազատամարտերը:

Նա իր ազգաշունչ և հոգեպարար խոսքով կարևոր պարտականություն դրեց մեր վրա՝ լինել **համերաշխ** և **միասնական:**

Ահավասիկ մնում է մեկ՝ Անգլիայի հայությանը, սկսած մեր քաղաքական կազմակերպություններից, համայնքային խորհուրդներից, եկեղեցական խնամակալություններից, մշակութային-մարզական միություններից մինչև բուն ժողովուրդը, սատար հանդիսանալ Հայոց Հայրապետի պատգամներին: Ամենայն լրջությամբ և պարտականության բարձր գիտակցությամբ հետևելով և անսալով նրա թելադրանքներին՝ Անգլիայի հայոց գաղութը պետք է վերածել առողջ և կենսունակ թեմի:

Գիտեմ, ծայրահեղ անհամբերությամբ սպասում եք այս հանդիպման կարևոր բաժնին, սակայն թույլ տվեք մի պահ շահագործել ձեր համբերությունը և օգտվելով իմ հանգամանքից՝ պատմել ձեզ մի ուշագրավ դեպք:

1973 թվականի սեպտեմբերին, Սուրբ Խաչի կիրակի օրը, Վեհափառի հրավերով, ես և կինս մաս կազմելով հայրապետական թափորին, Վեհարանից ուղղվում էինք դեպի Ս. Էջմիածնի Մայր տաճարը: Այդ պահին մենք ականատես եղանք անչափ հուզիչ մի տեսարանի, որը չենք կարող մոռանալ մինչև մեր կյանքի վերջը: Ձեզանից ովքեր ներկա են եղել Ս. Էջմիածնում, տոնական օրերին, շատ լավ կարող են հիշել, թե ինչպիսի խուռներամ բազմություն է հավաքված լինում Մայր Աթոռի շրջափակում: Այդ օրը, բազմաթիվ հայրենակիցներ խուժում էին դեպի թափորը՝ Վեհափառի Սուրբ Աջը առնելու և շրջազգեստը համբուրելու համար: Բազմության միջից մի երիտասարդ կին ակնածանքով և խոր հավատքով իր հիվանդ երեխային մոտեցրեց Վեհափառին՝ խնդրե-

լով աղոթել նրա համար և ձեռքը դնել նրա գլխին: Վեհափառի օրհնությունը հայցող այդ կինը հայաստանցի երիտասարդ մի կին էր:

Այս դեպքը և սրա նման շատ ուրիշ դեպքեր վկայում են այն անվիճելի ճշմարտությունը, որ Ամենայն Հայոց Հայրապետը ժողովրդի Վեհափառն է, սիրվում և հարգվում է ժողովրդի կողմից: Եվ ոչ մի գնահատանք չի կարող ավելի բարձր լինել, քան ժողովրդի գնահատանքը:

Այժմ պիտի խնդրեմ Վեհափառ Հորը՝ տալու իր պատգամը նույն ժողովրդի մի փոքր մասնիկին, որ հավաքվել է այստեղ լսելու իրեն»:

Ճաշկերույթի վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը վերստին արտահայտում է իր գոհունակությունը ջերմ և խանդավառ մթնոլորտի համար և նոր լիցք ու եռանդ մաղթում թեմի առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպրիանին, գաղութի այլ և այլ կազմակերպությունների անդամներին և լոնդոնահայ համայն գաղութին:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը հայտարարում է պարգևատրումը բարերար պր. Ռաֆիկ Սահակյանի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով և Հ.Բ.Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի քարտուղար պր. Կարպիս Եսայանի՝ «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Մայիսի 16-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Հայոց Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս Անգլիայում Սովետական Միության արտակարգ և լիապոր դեսպան պրն. Վիկտոր Պոպովին:

Նորին Սրբության և մեծարգո պրն. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Տ. Ներսես, Տ. Եղիշե սրբազանները և Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը՝ որպես գավազանակիր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԳԼԻԱՅԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ԿԱՐԴԻՆԱԼ ԲԱՍԻԼ ՀՅՈՒՄԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը Ս. Սարգիս եկեղեցուն կից հովվատան մեջ ընդունում է Անգլիայի կաթոլիկ Եկեղեցու պետ կարդինալ Բասիլ Հյումին:

Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի և կարդինալ Բասիլ Հյումի միջև տեղի է ունենում ջերմ ու սրտագին զրույց:

ՄԵԿՆՈՒՄ ՓԱՐԻԶ

Մայիսի 17-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանի, Լոնդոնից մեկնում է Փարիզ:

Լոնդոնի «Հիթրո» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Քենթրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ, Վիլկդընի եպս. Հիվեթ Թոմսոնը, Անգլիայի հայոց առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպրիանը, Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Տ. Ներսես եպս. Պոզապալյանը, Տ. Հովնան աբեղա Տերտերյանը, Լոնդոնի հայոց համայնքային եկեղեցական վարչության անդամները, ազգային զանազան մարմինների անդամներ, հայկական և տեղական թերթերի ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Մեկ ժամ տևող թռիչքից հետո Վեհափառ Հայրապետին փոխադրող օդանավը վայրէջք է կատարում Փարիզի «Շառլ Դը Գոլ» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Տ. Մյուռոն վրդ. Գըվըգյանը, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու քահանայից դասը, Փարիզի հայոց կրոնական ընկերակցության ներկայացուցչական և վարչական ժողովների և Մայր եկեղեցու հոգաբարձության անդամները, ազգային կանանց մարմինների և բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչները, հայկական թերթերի թղթակիցները և բազմաթիվ հավատացյալներ:

Հայոց Հայրապետին ողջունելու էին եկել նաև Ֆրանսիայում սովետական դեսպանատան ներկայացուցիչներ Ի. Տիմոսինը և Լ. Գասպարյանը:

Օդանավակայանում պատվո հյուրերին հատկացված սրահում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Փարիզի «Վեստմինստեր» հյուրանոցը, որտեղ բնակվում է Ֆրանսիայի մայրաքաղաքում իր կեցության բոլոր օրերին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 19-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում ծանոթ երգահան Ալիսա Թերպյանը՝ Բուենոս Այրեսից, և Նորին Սրբությանը հայտնում, որ մտադիր է «Աղթամար» անունով բալետի երաժշտություն հորինել:

*
* *

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Ֆրանսիայի «Ֆիգարո» թերթի թղթակիցը և հարցազրույց ունենում Նորին Սրբության հետ:

*
* *

Մայիսի 20-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը Փարիզի առաջնորդարանում ընդունում է այցելությունը Մայր Աթոռի բարերար պր. Արշավիր Կլորիկյանի, որը զրույց է ունենում Նորին Սրբության հետ Մայր Աթոռին իր նվիրած տպագրական մեքենաների հարցով:

Նույն օրը Վեհափառ Հայրապետին այցելում են Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Ժան Ապաճյանները՝ Բրյուսելից, ինչպես նաև պր. Մարտիկ Տակառյանը:

Հայոց Հայրապետին աջահամբույրով ողջունելու են գալիս նաև փարիզահայ այգայիններ՝ Մայր Աթոռի բարերար Գևորգ Պաֆրյանը, ինչպես նաև Սարգիս Գասպարյանը և տիկ. Թագուհի Պեյլերյանը, որոնք կարևոր նվիրատվություն են կատարում ի պայծառություն Մայր Աթոռի:

*
* *

Մայիսի 21-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում են ունենում Փարիզի «Աղքատախնամ» կազմակերպության ղեկավար անդամները:

*
* *

Նույն օրը, ավելի ուշ, Վեհափառ Հայրապետին է այցելում Միլանի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը և Նորին Սրբությանը փոխանցում իր համայնքի սերն ու հարգանքը:

Ժամը 13-ին ֆրանսահայ հայտնի նկարիչ Ժանսեմը (Հովհաննես Սեմերջյան) Վեհափառ Հայրապետին հրավիրում է իր ցուցահանդեսին:

Այս առթիվ հայ վաստակաշատ նկարիչը տալիս է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

*
* *

Մայիսի 22-ին, կիրակի.—Հոգեգալուստ.

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի միաբան և Հայոց Հայրապետի գավազանակիր Տ. Ստեփանոս վրդ. Չաքայանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ մի քարոզ է խոսում Տ. Ստեփանոս վարդապետը՝ վեր հանելով Հոգեգալստյան տոնի նշանակությունը և նրա ներգործությունը մեր ժողովրդի պատմության ընթացքի վրա:

Հավարտ ս. պատարագի հավատացյալների բազմությունը մոտենում է Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով ստանում Նորին Սրբության օրհնությունը:

*
* *

Նույն օրը, ժամը 14-ին, Մայր Աթոռի բարերարներ Սուրեն և Գուրգեն Գործունյանները Փարիզի «Գրիյյոն» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում են ճոխ ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էին Տ. Սերովբե աբեպ. Մանուկյանը, Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը, Գործունյան ընտանիքի անդամները և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթի ընթացքում Տ. Գյուտ եպս. Նագաշյանը ընթերցում է Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը՝ ուղղված Մայր Աթոռիս բարերարներ Սուրեն և Գուրգեն Գործունյան եղբայրներին, որով Վեհափառ Հայրապետը պարգևատրում է նրանց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, խոսքն ուղղելով Մայր Աթոռի բարերարներին՝ ասում է.

«Ես շատ երջանիկ եմ, որ իմ այցելությանը զուգադիպեց այս միջոցառումը, և ես հնարավորություն ունեցա «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու ձեր կուրծքերը իմ ձեռքով, որ միայն իմը չէ, այլ մեր 130 կաթողիկոսներինը»:

Այնուհետև շնորհակալական խոսքով հանդես են գալիս Սուրեն և Գուրգեն Գործունյանները:

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պսհպանիչ»-ով:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետին այցելում է դոկտ. Սիրարփի Տեր-Ներսեսյանը և Նորին Սրբության հետ ունենում ջերմ զրույց:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 24-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց եկեղեցու առաջնորդարանում ընդունում է այցելությունը՝

ա. Տեր և տիկին Մկրտիչ Շելեֆյանների (Ժնև).

բ. Վալանսի հայոց հոգևոր հովիվ Տ. Նարեկ քահանա Վարդանյանի և եկեղեցական վարչության ատենապետ Մանուկ Ստեփանյանի (Վալանս).

գ. Փարիզի Հայ Կապույտ Խաչի կենտրոնական վարչության մի խումբ անդամների՝ գլխավորությամբ վարչության ատենապետուհի տիկին Շիրոյանի.

դ. Փարիզի «Centre de recherches sur la diaspora arménienne» հիմնարկության ներկայացուցիչներ տիարք Միշել Բաղամյանի և Ժան Քեբաբճյանի:

ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Փարիզի կառավարական շենքում տեղի է ունենում հանդիսություն՝ նվիրված Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի՝ Ֆրանսիայում պաշտոնավարման 30-ամյակին, նախագահությամբ Ֆրանսիական Հանրապետության ներքին գործերի մինիստր պրն. Գաստոն Դեֆերի:

Հանդիսությանը ներկա էին.

1. Ֆրանսիայի ներքին անվտանգության մինիստր և Ալֆորվիլի քաղաքագլուխ պրն. Ժոզեֆ Ֆրանչեսկին.

2. Ներքին գործերի մինիստրության ընդհանուր տնօրեն պրն. Մորիս Գրիմոն.

3. Փարիզի նահանգապետ պրն. Լյուսիեն Վոշելը.

4. Փարիզի ընդհանուր ոստիկանության պետ պրն. Ժան Պերյեն.

5. Ալֆորվիլի երեսփոխան պրն. Ռընե Ռուկյեն.

6. Երեսփոխանական ժողովի փոխնախագահ պրն. Գի Դյուկոլոնեն.

7. Ֆրանսիայում պապական նվիրակ մոնսենյոր Էգանո Ֆելեսին.

8. Փարիզի կարդինալ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ մոնսենյոր Դել Ռյումոն.

9. Հույն Օրթոդոքս Եկեղեցու Տիեզերական պատրիարքության ներկայացուցիչ Մելետիոս միտրոպոլիտը.

10. Ռումեն պատրիարքության ներկայացուցիչ Նիկոլայ արքեպիսկոպոսը.

11. Փարիզի «Էնստիտյու կաթոլիկ»-ի տնօրեն մոնսենյոր Ութը.

12. Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու արքեպիսկոպոս Անդրիան Ռիչուն.

13. Հայ կաթոլիկ համայնքի էգզարխ Գրիգոր եպս. Կապրոյանը.

14. Փարիզի Ավետարանական համայնքի ներկայացուցիչ վերապատվելի Դանիել Սահակյանը:

Հանդիսությանը, որպես պատվո հյուր, ներկա էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Հանդիսությանը ներկա էին նաև ֆրանսահայ ողջ հոգևոր դասը, ազգային մարմինների ղեկավար անդամներն ու ներկայացուցիչները, եկեղեցական մարմինների պատասխանատու անձնավորություններ, մտավորականներ, արվեստագետներ և հայ և օտար բազմաթիվ այլ հրավիրյալներ՝ ավելի քան 500 հոգի:

Հանդիսության ժամանակ առաջինը հանդես է գալիս Ֆրանսիայի ներքին գործերի մինիստր Գաստոն Դեֆերը հետևյալ ուղերձով.

«Ձերդ Սրբություն,

Գերաշնորհ հայրեր,

Տիկնայք և պարոնայք,

Չափազանց տպավորիչ երևույթ է, նույնիսկ քաղաքական մի գործչի համար, որը սովոր է հրապարակային ճառեր արտասանելու, ելույթ ունենալ՝ ձեր առջև: Այս երեկո մենք հավաքվել ենք այստեղ՝ Պատվո Լեգեոնի շքանշանի պաշտոնական հանձնումը կատարելու Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին:

Գերաշնորհ հայր, Ձեր կյանքը սքանչելի մի օրինակ է, որով կարող են ներշնչվել բոլոր հայերը, բոլոր քրիստոնյաները և բոլոր նրանք, ովքեր սպասավորներն են մի կրոնի, ինչպիսին էլ լինի այն:

Լոնդոնի համալսարանում Ձեր ուսումն ստանալուց և ապա Երուսաղեմում այն շարունակելուց հետո, Դուք եղել եք դասախոս նաև հենց Երուսաղեմի հայոց վանքում և հետո՝ հոգևոր այլ հաստատություններում: Շուտով Ձեզ վստահել են պատասխանատու աշխատանքներ, և Դուք կևևոր դեր եք կատարել ձեր ազգային կյանքում: Այդպիսով է, որ նախ Դուք ստանձնել եք Նորին Սրբություն Վազգեն Ա կաթողիկոսի կողմից Ձեզ վստահված բարձր առաքելությունը՝ ներկայացնելով Նրան Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում և ապա զբաղեցրել միջազգային առումով չափազանց կարևոր պաշտոններ. օրինակ՝ Դուք միաժամանակ եղել եք Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատվիրակը Արևմտյան Եվրոպայում, մասնակցել եք Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վանական ժողովներին որպես ներկայացուցիչը Ամենայն Հայոց Հայրապետի, եղել եք անդամ Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի, ինչպես նաև անդամ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության միաբանական ժողովի:

Դուք չեք բավարարվել ազգային և միջազգային մակարդակի վրա ծավալված Ձեր այս գործունեությամբ: Դուք զբաղվել եք միաժամանակ մտավոր աշխատանքներով. գրել եք մի գիրք Երուսաղեմի հայոց պատրիարքության պատմության մասին: Բացի այդ, Դուք ունեցել եք ստեղծագործական գնահատելի գործունեություն, քանի որ Դուք եք եղել նախաձեռնողը Ֆրանսիայում հայկական նոր եկեղեցիների, ինչպես նաև հայ մշակույթի տան կառուցման: Մեծ է եղել Ձեր ազդեցությունը Ֆրանսիայի հայկական համայնքի ծոցում:

Այստեղ ես կցանկանայի կանգ առնել մի րոպե՝ հիշեցնելու համար ձեզ, թե ինչպիսի կարևորություն է ներկայացնում այդ հայկական համայնքը Ֆրանսիայում ընդհանրապես և մասնավորապես Ալֆորվիլում (որի քաղաքագլուխը և միաժամանակ Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրության պետական քարտուղարը՝ պարոն Ֆրանչեսկին, ներկա է այստեղ), Մարսելում (որի քաղաքագլուխն եմ ես) և այլուր:

Ֆրանսահայերը ուշագրավ մի առանձնահատկություն ունեն. դա այն է, որ նրանցից շատերը թեև ֆրանսիացիներ են կամ ֆրանսիական քաղաքացիություն ընդունածներ և կամ Ֆրանսիայում ծնվածներ, սակայն նրանք ուժեղ կերպով կապված են մնում իրենց մայր երկրին, իրենց մայր հայրենիքին: Նրանք երբեք չեն մոռանում իրենց նախնիների դասերը, իրենց ավանդությունները, իրենց մշակույթը, երաժշտությունը, որոնք էական են նրանց համար: Նրանք չեն մոռանում հատկապես իրենց Եկեղեցին, որովհետև իրենց Եկեղեցու միջոցով է, որ նրանք ավելի հաճախ դրսևորում են իրենց սերն ու

կապվածությունը իրենց հայկական ծագումին: Եվ ինչպիսի՜ Եկեղեցի...: Այդ Եկեղեցին այնպիսի նվիրական, հարապատ ու սուրբ հաստատություն է դարձել նրանց համար, որ հայ ժողովրդի ավելի քան 90 տոկոսը անխախտ հավատարմությամբ կապված է մնում իր մայր Եկեղեցուն: Ֆրանսիայում բնակվող հայերը, հավատարիմ մնալով հանդերձ իրենց մայր հայրենիքին, կարողացել են կատարելապես մերվել մեր ազգային հասարակության մեջ, որտեղ նրանց հաջողվել է բարձրանալ հասարակական կյանքի բոլոր աստիճանները: Նրանց մեջ կան անշուշտ սոցիալական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում համեստ դիրքերի վրա գտնվող անձինք, սակայն կան նաև իրավաբաններ, պրոֆեսորներ, բժիշկներ և այլ անվանի մասնագետներ: Ես կարող եմ ասել, որ Ֆրանսիայի մեկ ծանոթ բոլոր քաղաքներում հայկական համայնքը ամբողջապես ներգրավված է մեր ազգային հասարակության մեջ՝ միաժամանակ պահելով իր ինքնուրույն դիմագիծը: Այդ քաղաքներում հայերի հասցեին ուղղված թշնամական կամ բացասական ոչ մի արտահայտություն, ոչ մի բառ չի լսվում երբեք, որովհետև նրանք կարողացել են իրենք իրենց պարտադրել իրենց աշխատանքով, իրենց ուղղամտությամբ և լրջությամբ, այնքան, որ, եթե Մարսելում ասում են՝ հայ, այդ միևնույն է, թե ասեն՝ մարսելցի, երբ Ալֆորվիլում ասում են՝ հայ, այդ միևնույն է, թե ասեն՝ ալֆորվիլցի. և այսպես ամենուր:

Անկախ այն բանից, թե մեկանից յուրաքանչյուրը, հյուսիսից մինչև հարավ և արևելքից արևմուտք, իր բնավորությամբ ինչ է ներկայացնում, կգում ենք, որ մենք բոլորս մաս ենք կազմում միևնույն ազգին: Մեր քաղաքներում մի քանի կարևոր համայնքներ կան, որոնց մենք մեծապես համակրում ենք. դրանցից մեկը ֆրանսահայ համայնքն է: Մենք հույս ունենք, որ մի օր, վերջապես, պաշտոնապես ճանաչում պիտի գտնի ծանր ողբերգությունը, որին ենթարկվեցին մեր հայրենակիցները անցյալում: Մենք մեկ միմյանց մոտ և հարազատ ենք զգում ոչ միայն նրա համար, որ մեկնից շատերը նույն քաղաքացիությունն ունեն, այլև նրա համար, որ դուք կարողացաք հարմարվել ոչ միայն ֆրանսիական մտայնության ընդհանրապես, այլ նաև Ֆրանսիայի քաղաքներից յուրաքանչյուրի մտայնությանը, որոնց մեջ դուք ապրում եք:

Գերաշնորհ հայր, Դուք Ֆրանսիայի հայոց արքեպիսկոպոսն եք, հետևաբար՝ Ֆրանսիայի Հայոց Եկեղեցու պետը: Ֆրանսիայում Ձեր գործունեությամբ Դուք կարողացաք հարգանք և համակրանք ստեղծել Ձեր անձի շուրջը: Նաև Ձեր ներկայացրած բարոյական հեղինակությամբ, բոլոր ֆրանսահայերի Ձեր նկատմամբ տածած անվերապահ սիրով Դուք արժանի դարձաք այս բարձր պարգևին՝ ֆրանսիական Պատվո Լեգեոնի առաջին կարգի շքանշանին:

Հանուն Ֆրանսիական Հանրապետության նախագահի և ի գնահատումն Ձեզ տրված իշխանության, Ձեզ հռչակում ենք «Պատվո Լեգեոնի Ասպետ»:

Իր խոսքի ավարտին մեծարգո մինիստրը Տ. Սերովբե սրբազանի կուրծքը զարդարում է «Պատվո լեգեոնի» շքանշանով:

Պատասխան հետևյալ խոսքով հանդես է գալիս հոբելյար սրբազանը.

«Ձերդ Սրբություն,

Մեծարգո պարոն մինիստր,

Գերաշնորհ հայրեր,

Տիկնայք և պարոնայք,

Թող թույլ տրվի մեկ ասել այստեղ, թե որքա՜ն ենք զգացված Ֆրանսիայի Հանրապետության նախագահի այն վերաբերմունքից, որով նա Մեզ պատվեց— Ձեր բարեհաճ առաջարկությամբ, պարոն մինիստր—Պատվո Լեգեոնի շքանշա-

նով և դրանով իսկ արտահայտեց իր գնահատանքը հանդեպ Ֆրանսիայի հայկական համայնքի, որի հոգևոր առաջնորդն ենք Մենք:

Պարոն մինիստր, շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ ցանկացաք, հակառակ Ձեր բազում զբաղումներին, լինել այսօր մեր մեջ մեր համայնքի անդամներից մեկը և անձնապես հանձնել Մեզ պատվո, առաքինի քաղաքացիության և հայրենանվեր գործի համար սահմանված այս շքանշանը:

Շնորհակալ ենք Ձեր ազնիվ և այնքան ջերմ խոսքերի համար: Շնորհակալ ենք մանավանդ այն հետաքրքրության և համակրանքի համար, որ բազում առիթներով ցուցաբերել եք մեր համայնքի նկատմամբ:

Մեր շնորհակալությունները նույնպես այն բոլոր անձանց և բոլոր բարեկամներին, որոնք բարեհաճեցին պատվել Մեզ իրենց ներկայությամբ:

Նման առիթներով տեղին է բնականաբար ոգեկոչել այն հարաբերությունները, որոնք հաստատվեցին, դեռևս Խաչակրաց ժամանակաշրջանից սկսած, հայերի և ֆրանսիացիների միջև: Այդ կապերը, որոնք ավելի շատ քաղաքական, նույնիսկ զինվորական բնույթ էին կրում, հաստատում են մեր հարաբերությունների հնությունը և որոնք, անտարակույս, իրենց ազդեցությունն են ունեցել մեր պատմության ընթացքի վրա:

Սակայն մենք կարծում ենք, որ 19-րդ դարից էր մանավանդ, որ Ֆրանսիայի և Հայաստանի միջև հաստատվեցին իսկական սերտ ու տևական հարաբերություններ, որոնք մեծապես նպաստավորվեցին այն հանգամանքից, որ այս երկու երկրների ժողովուրդները ունեին բարոյական նույն ըմբռնումը և նույն հավատքը ոգեկան ու իմացական արժեքների նկատմամբ:

Գնտվելով ֆրանսիական մշակույթի ուժեղ ազդեցության տակ՝ հայերը առաջիններից մեկը եղան, որոնք այդ մշակույթը տարածեցին Արևելքում, հատկապես ֆրանսիացի մեծ գրողների՝ Լամարտինի, Վիկտոր Հյուգոյի և մյուսների երկերի թարգմանությամբ, հեղինակներ, որոնց ստեղծագործությունները ներշնչման անսպառ աղբյուր հանդիսացան հայ բանաստեղծների և գրողների համար:

Ֆրանսիական հեղափոխության մեծ գաղափարներն էին, որ նպաստեցին 19-րդ դարի հայ ազգային ազատագրական շարժումների սկզբնավորմանը՝ մեր քաղաքական ղեկավարների մեծ մասը իրենց ուսումն ու գաղափարական դաստիարակությունը ստացած լինելով ֆրանսիական դպրոցներում և համալսարաններում: Տոգորված հեղափոխական գաղափարներով՝ նրանք այդ գաղափարները տարածեցին ոչ միայն իրենց ժողովրդի մեջ, այլ նաև ամբողջ Մերձավոր Արևելքում:

Իրենց պատմության մեջ ամբողջ մի ժամանակաշրջան իրենց մշակույթով ու ոգով սերտ կերպով կապված լինելով արևմտյան քաղաքակրթությանը և մասնավորապես Ֆրանսիային՝ հայերը, ավելի քան ուրիշ որևէ ժողովուրդ, համոզվեցին, որ «ամեն մի ժողովուրդ ունի երկու հայրենիք՝ ի՛ր հայրենիքը և Ֆրանսիան»: Սակայն, ավա՜ղ, ծայր աստիճան ողբերգական հանգամանքներում է, որ այս համոզումը նրանց համար պիտի դառնար ստուգություն. քանի որ 1915 թվականի ցեղասպանության հետևանքով է, որ կոտորածներից ճողոպրած հայերը իրենց քայլերն ուղղեցին հատկապես դեպի Ֆրանսիա, այս երկիրը, որ նրանց ընդունեց և հյուրընկալեց իր ավանդական վեհանձնությամբ:

Վաթսուն և ութ տարիներ են անցել այդ թվականից: Երբեմնի անհայրենիք այդ հայերը և նրանց զավակները այսօր մերվել են այս երկրի ժողովրդի մեջ և դարձել լիիրավ ֆրանսիական քաղաքացիներ, որոնք, սակայն, մշտապես

ցանկանում են հաստատել իրենց ինքնությունը՝ պահպանելով իրենց նախնիների հավատքը, իրենց հպարտամյա լեզուն, իրենց մշակույթը:

Այս կապակցությամբ երջանիկ ենք հաստատելու, որ ֆրանսիական կառավարությունը նրանց ընձեռում է բոլոր միջոցները՝ իրականացնելու իրենց այդ նպատակը: Հանուն ամբողջ ֆրանսահայ համայնքի մեր երախտագիտությունն ենք հայտնում ֆրանսիական կառավարությանը:

Եվ վերջապես, մեծ է մեր ուրախությունը, որ անսպասելի և երջանիկ հանգամանքների բերումով այսօր գտնվում ենք Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն Վազգեն Առաջինի կողքին: Մեր հարգալից հավատարմությունն ենք հայտնում Նորին Սրբությանը և խնդրում Նրան, որ բարեհաճի տալ Իր օրհնությունը Ֆրանսիային ու նրա ժողովրդին՝ նրա ծաղկման ու բարգավաճման համար խաղաղության մեջ»:

Հանդիսության վերջում խոսք է տրվում հանդիսության պատվո հյուր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը Ֆրանսերեն լեզվով արտասանում է հետևյալ գեղեցիկ ու բովանդակալից ճառը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Հոգևոր Եղբայրներ մեր ի Քրիստոս,

Մեծահարգ տիարք և պարոնայք,

«Այսօր է կոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. ՃԺԷ 24):

Անհունորեն երջանիկ ենք ներկա գտնվելով այս բացառիկ հանդիսության, երբ Ֆրանսիայի հայոց հոգևոր առաջնորդին՝ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին, կմատուցվի Ֆրանսիայի Հանրապետության նախագահի շնորհած «Պատվո Լեգեոնի Ասպետի» շքանշանը:

Պատվո այս բարձր շքանշանով կպարգևատրվի կուրծքը Մեր սիրեցյալ սրբազան եղբոր, ի գնահատումն իր երեսուն տարիներու եկեղեցական ծառայությանց հյուրընկալ ֆրանսական հողի վրա, իբրև առաջնորդը Ֆրանսայի հայոց թեմի, որ իրեն հատուկ իմաստությամբ պատասխանատվության զգացումով և հավատարմությամբ կատարած է իր պարտականությունը հանդեպ իր Մայր Եկեղեցիին, հանդեպ իր հավատացյալ հոտին, հանդեպ իր ֆրանսական հայրենիքին:

Պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի վավակ, 1915-ի ցեղասպանության արհավիրքներեն հպիվ ազատած վեցամյա որբ երեխա, ապաստան գտավ ուրիշ որբերու հետ Երուսաղեմի հայոց պատրիարքության հովանիին ներքև, ուր կրոնաբույր մթնոլորտի մեջ, մարմնով ու հոգիով աճեցավ, զարգացավ իբրև իր սերունդի ամենաշնորհալի ուսանողներեն մին, և շուտով իր արժանիքները բարձրացուցին զինք մինչև եպիսկոպոսության և Արևմըտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի աստիճաններուն:

Եվ ահա երեսուն տարիներե ի վեր Սերովբե արքեպիսկոպոս, միշտ նվիրված Քրիստոսի Եկեղեցիին ծառայելու իր ուխտին, միշտ նախանձախնդիր Հայոց Առաքելական Եկեղեցիի կարգ ու կանոնին ու ավանդությանց պահպանման, միշտ ներշնչված հայոց պատմության հերոսական ոգիով և լուսավորված հայ հոգևոր մշակույթի լույսերով, ու նաև միշտ երախտապարտ ֆրանսական մարդասեր, հայապաշտպան հայրենիքին, ուր Հայ Եկեղեցվո վավակները կվայելեն բավում բարիքներ, այո՛, Սերովբե արքեպիսկոպոս նույն եռանդով ու ներ-

շընչանքներով կշարունակե իր կրոնական ու դաստիարակչական առաքելությունը՝ շրջապատված սիրովը իր հոտին, շրջապատված հարգանքովը իր գործակիցներուն, որոնց վրա այսօր կուգա ավելնալու, իբրև դափնեպսակ, Ֆրանսիայի Հանրապետության մեծահոգի պարգևատրումը:

Իսկ Մենք՝ առաջին սպասավորը Հայ Առաքելական Եկեղեցվո, մեծ ուրախությամբ հաստատելով այս բոլորը, Սերովբե արքեպիսկոպոսին կբերենք Մեր հայրապետական ողջույնը, Մեր եղբայրական սերը, Մեր շնորհավորանքը և Աստուծո օրհնությունը Սուրբ Էջմիածնեն:

Եվ թույլ տվեք այս առթիվ Մեզի համար պարտք համարել Մեր խորագոյն շնորհակալությունը և մեծարանքը ներկայացնելու Ֆրանսայի Հանրապետության վսեմաշուք նախագահին՝ աղոթքով ջերմագին, որ Աստված հավետ անսասան պահպանե փառքերու երկիրը Ֆրանսան, մարդկային քաղաքակրթության ծառայելու իր պատմական առաքելության ճանապարհին վրա:

Կվերջացնենք Մեր խոսքը՝ հիշելով դեպք մը: 1934-ին Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Լուի Բարթու, իր այցելության առթիվ Ռումանիա, Կարոլ Բ թագավորի հետ միատեղ անակնկալ կերպով մուտք գործեց Բուխարեստի համալսարանի գրադարանի մեծ ընթերցասրահեն ներս, ուր գրասեղաններուն առջև նստած կաշխատեին հարյուրե ավելի ուսանողներ: Ուսանողները, հոտընկայս, ծափողջույններով դիմավորեցին ֆրանսացի մեծ հյուրը, որ իրեն հատուկ ճառագայթող դեմքով ջերմություն կսփռեր իր շուրջը: Այդ պահուն ուսանողներեն մին բարձրաձայն բացականչեց՝ «Vive la France!» (Կեցցե Ֆրանսան): Այդ ուսանողը այսօրվան Հայոց Կաթողիկոսն է: Ֆրանսացի նախարարը մոտեցավ Մեզ և սեղմեց մեր ձեռքը:

Թույլ տվեք այսօր ալ մեր խոսքը վերջացնել նույն բացականչությամբ՝ «Vive la France éternelle!» (Կեցցե՛ հավիտենական Ֆրանսան)»:

ԴՈԿՏՈՐ ՖԻԼԻՊ ՓՈԹԵՐԻ ԱՅՑԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մայիսի 25-ին, ժամը 12-ին, Փարիզի հայոց առաջնորդարանում Հայոց Հայրապետին է այցելում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար վերապատվելի դոկտ. Ֆիլիպ Փոթերը:

Նորին Սրբության և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի միջև տեղի է ունենում մտքերի փոխանակում Հայաստանյայց Եկեղեցուն և հատկապես Վանկուվերում կայանալիք ԵՀԽ-ի 6-րդ համագումարին վերաբերող մի շարք հարցերի շուրջ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴՊՐՈՑԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթերի ընկերակցությամբ, այցելում է Ռենսի Դպրոցասեր Տիկնանց գիշերօթիկ վարժարան:

Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առթիվ դպրոցում կազմակերպվել էր հանդիսություն:

Բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդիսությունը բաց է անում վարժարանի երիտասարդ տնօրենուհին:

Այնուհետև գեղարվեստական ճոխ հայտագրով հանդես են գալիս դպրոցի աշակերտներն ու աշակերտուհիները:

Հանդիսության վերջում Իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայ-

ռապետը՝ գնահատելով հայ կանանց տքնաջան և անձնվեր գործունեությունը՝ ի պահպանություն ընտանիքի սրբության, լեզվի մաքրության և հավատքի անաղարտության: Նորին Սրբությունը գնահատանքի և քաջալերանքի խոսք է ուղղում նաև դպրոցի ուսուցչական կազմին, որոնք աննահանջ սիրով ու մեծ նվիրումով օտար ափերում վառ են պահում Ս. Մեսրոպ Մաշտոցի ջունչն ու Լուսավորչի կանթեղի փայլը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Մայիսի 26-ին, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս Ֆրանսիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Յուրի Վորոնցովին:

Նորին Սրբության և մեծարգո դեսպանի առջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Տ. Գյուտ եպս. Նագաջյանը և Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը՝ որպես գավազանակիր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Մայիսի 26-ին Վեհափառ Հայրապետին է այցելում Մայր Աթոռի բարերար տիրոջ Արշամ Բաբայանը՝ Մարսելից, և կարևոր նվիրատվություն անում հոգևոր ճեմարանի շենքի նոր թևի կառուցման համար:

Ավելի ուշ, երեկոյան, Վեհափառ Հայրապետին այցի է գալիս պրոֆ. Ռընե Քուպը:

Մայիսի 27-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Սորբոնի համալսարանի արևելյան լեզուների բաժնի հայագիտական ամբիոնի վարիչ պրոֆ. Ժան-Պիեռ Մահեի՝ իր տիկնոջ հետ:

Ֆրանսիացի երիտասարդ գիտնականը Հայոց Հայրապետին զեկուցում է իր հայագիտական նոր աշխատանքների մասին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետին այցի է գալիս և հարցազրույց խնդրում «Ռադիո-Ազգ»-ի տնօրեն տիար Արմեն Խաչիկյանը:

Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու համար փարիզահայ ազգայիններ Թորոս Օսմանճյանը և Օննիկ Ալթունյանը այցելում են Նորին Սրբությանը:

Վեհափառ Հայրապետը ընդունում է նաև այցելությունը փարիզաբնակ պրն. պրն. Արա Թորանյանի և Ավետիս Ասլանյանի:

Ավելի ուշ, երեկոյան ժամը 17-ին, փարիզաբնակ Իչքալացյան Լորա և Լիդա քույրերը իրենց բնակարանում Հայոց Հայրապետին պատվում են թեյասեղանով: Թեյասեղանին ներկա էին շուրջ 15 հրավիրյալներ, այդ թվում նաև՝ հայ անվանի բեմադրիչ Աշոտ Մալաքյանը (Հանրի Վեռնեյ):

Այս առթիվ Իչքալացյան քույրերը կարևոր մի նվիրատվություն են անում Մայր Աթոռի պայծառության համար:

Մայիսի 28-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը ֆրանսահայ Մշակութային Միության ղեկավար անդամներ տիարք Արտավազդ Բերբերյանի և Գևորգ Սարյանի:

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում տիար Վահրամ Դավիթխանյանը և ի հիշատակ իր հանգուցյալ կնոջ՝ Էմմա Դավիթխանյանի, կատարում կարևոր նվիրատվություն Մայր Աթոռի պայծառության համար:

Ավելի ուշ Վեհափառ Հայրապետին այցելում և հարցապրույց է խնդրում Փարիզի «Արմենիա» ամսաթերթի թղթակիցը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՓԱՐԻԶԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու առաջնորդարանում ընդունում է Փարիզի եկեղեցական վարչության անդամներին և հոգևորականներին՝ շուրջ 80 հոգի:

Նորին Սրբությունը ներկաներին հաղորդակից է դարձնում Հայ Եկեղեցու հոգևոր նվաճումներին և նրա ներկա բարգավաճ վիճակին ի Հայաստան՝ հորդորելով նրանց նախանձախնդիր լինել, որ սփյուռքի պայմաններում նույնպես վառ պահվի Լուսավորչի կանթեղը:

Մոտ երկու ժամ տևող սույն հավաքույթից հետո, եկեղեցուն կից դահլիճում տրվում է ընթրիք Եկեղեցասեր Տիկնանց Միության կողմից:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 29-ին, կիրակի:

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում մատուցում է հանդիսավոր ս. պատարագ:

Եկեղեցին և նրա շրջափակը լցված են հայ հավատացյալների խուռներամ բազմությամբ:

Ս. պատարագին ներկա են Փարիզի հայ հոգևորականաց դասը, կրոնական ընկերակցության և ներկայացուցչական վարչական ժողովի պատվարժան անդամները, փարիզահայ բոլոր կազմակերպությունների և հայ մամուլի ներկայացուցիչները և ժողովրդի հոծ բազմություն:

Ս. պատարագին ներկա են նաև քույր Եկեղեցիների և պետական ու քաղաքային իշխանությանց հարգարժան ներկայացուցիչներ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը արտասանում է մի ոգեշունչ քարոզ՝ ոգեկոչելով Սարդարապատի ճակատամարտում զոհված հայ մարտիկների հիշատակը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ (29 մայիսի 1983 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր»:

«Տեր Աստված, մեր աղոթքները թող խունկի նման բարձրանան դեպի քեզ»:

Սաղմոսերգուի այս մաղթանքը այս պահուս կիամակե մեր բոլորի սրտերն ու մտածումները, երբ հավաքված ենք բոլորս այս սուրբ տաճարի կամարներուն տակ սուրբ պատարագի պահուն: Մեր օրերուն, կթվի թե աղոթելը դժվար է, երբեմն նույնիսկ անկարելի: Բնականաբար աղոթել կարելի է ամեն տեղ, ամեն առիթով, բայց կիսորհիմ, թե աղոթքի մթնոլորտ կստեղծվի առավելապես,

երբ հավատացյալները հավաքված են եկեղեցվո կամարներու ներքև: Հիշենք Հիսուսի խոսքը, թե՝ «Ուր որ հավաքվիք իմ անունով, ես ձեր մեջ եմ»: Պատարագի երգեցողության և աղոթքներու քաղցր մթնոլորտի մեջ աղոթքը իր ճամփան կբանա, և մեր հոգիները կկարողանան ազատվիլ աշխարհի աղմուկներեն, մտահոգություններեն, դժվարություններեն: Կզգանք, թե կանգնած ենք Աստուծո առջև: Եվ այդ պահն է, որ կստեղծե աղոթելու հնարավորություն, նույնիսկ՝ աղոթելու պահանջք:

Աղոթելե առաջ մարդ պետք է իր հոգին խաղաղության վիճակի մեջ դնե: Առանց ներքնապես խաղաղ հոգեվիճակի հնարավոր չէ աղոթել: Եվ կխորհիմ, թե եկեղեցվո կամարներու տակ է մանավանդ, որ կստեղծվի այդ հոգեկան խաղաղության մթնոլորտը:

Մեր դարաշրջանին շատ կխոսվի խաղաղության մասին, որ մարդկային հին երազանք է անշուշտ: Հազարավոր տարիներե ի վեր, առնվազն քրիստոնեության արշալույսեն սկսյալ, խաղաղության իղձը համակած է մարդկությունը համայն, որովհետև Քրիստոսի Ավետարանը կհանդիսանա խաղաղության և մարդասիրության մեծագույն Գիրքը, որ պարգևվեցավ մարդկության: Եվ այսօր ալ խաղաղության, ամեն տեսակի խաղաղություններու հիմքը մարդու ներքին խաղաղության հոգեվիճակն է: Առանց ներքին այդ խաղաղության ոչ մեկ խաղաղություն երևի չի կրնար ստեղծվիլ՝ անհատական, ընտանեկան, հասարակական և նույնիսկ միջազգային կյանքի մեջ: Պետք է հավատքով ու երկյուղածությամբ հիշենք Հիսուսի այն պատվիրանը, երբ ան աչքերը փակելե առաջ խաչի վրա, կտակ թողուց մարդկության՝ ըսելով. «Ես խաղաղություն կթողում ձեզի, իմ խաղաղությունը կուտամ ձեզի»: Այդ «իմ խաղաղությունը» Հիսուսի հոգեկան ներքին խաղաղությունն է, և այդ մասին է, որ ես կուզեմ խոսիլ այս պահուն:

Ես կհիշեմ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ֆրանսուա Պոնսեի հիշողությունները վերջին պատերազմին նախորդող դեպքերու առնչությամբ: Այդ օրերուն, երբ Եվրոպայի բոլոր ազգերը կզգային, թե պիտի սանձազերծվի Գերմանիո ահավոր պատերազմական մեքենան, Ֆրանսուա Պոնսեն վերջին փորձ մը կուզե կատարել և այցելության կերթա Բերհսդեսգադեն, դրախտային խաղաղ բնության ծոցին մեջ երկնամերձ լեռներով ու խիտ անտառներով շրջապատված այն հանգստավայրը, ուր կբնակեր այն օրերուն Գերմանիո դաժան դիկտատորը: Ֆրանսացի նախարարը կփորձե անգամ մը ևս քրիստոնեաբար, մարդասիրաբար կոչ ուղղել անոր խղճին, որ պահպանե իր հոգիի խաղաղությունը և խնայե մարդկության՝ ներշնչվելով այդ դրախտային խաղաղ բնութենեն, որուն մեջ կապրեր: Գերմանիո պատերազմամոլ ղեկավարի հոգիին մեջ սակայն տեղ չկար խաղաղության:

Մեկ շաբաթ հետո անոր ռազմական մեքենան սկսավ շարժիլ, և սանձազերծվեցավ ահավոր երկրորդ պատերազմը համաշխարհային, որուն զոհ գացին շուրջ հիսուն միլիոն մարդիկ. անոնց մեջ նաև ավելի քան երկու հարյուր հազար զավակները մեր հայրենիքի:

Մեր օրերուն ալ մարդիկ և ազգություններ խաղաղություն կփնտրեն: Եվ ես վստահ եմ, որ աշխարհի վրա չկա ժողովուրդ մը, չկա պետություն մը, որ չփափագի այդ խաղաղության թագավորումը մարդկության կյանքի վրա:

Երբ խոսքը հոգեկան խաղաղության մասին է, ես կուզեմ ընդգծել նաև խաղաղությունն գաղափարը ընտանեկան կյանքի մեջ, որ նույնպես շատ կարևոր է և Հայ Եկեղեցվո ու մեր ժողովուրդի ավանդական ըմբռնումներուն և բարոյական նկարագրին լրիվ համապատասխան: Խաղաղություն աշխատանքի վայ-

րի մեջ, ընկերային կյանքի սահմաններեն ներս, խաղաղություն նաև մեր եկեղեցական համայնքներեն ներս: Փառք Աստուծո, այստեղ, ձեր գաղութին մեջ, խաղաղություն կտիրե, ինչ որ երբեմն չէ պարագան ուրիշ գաղութներու, երբ անցանկալի երևույթներ կդրսևորվին եկեղեցական համայնքներու ծոցին մեջ:

Սիրելիներ մեր, այսօր փորձեցեք մեկի հետ աղոթել, փորձեցեք խաղաղ հոգիով աղոթել՝ կարենալ մոտենալու համար աստվածային բարձունքներուն: Այսպես միայն մեր աղոթքները խունկի պես ուղիղ կբարձրանան առ Աստված:

Բարեպաշտ հավատացյալներ, այսօր նաև ոգեկոչումի օր է մեկի՝ հայերուս համար, ուր ալ գտնվինք այս աշխարհի վրա: Տարին, գոնե երեք նվիրական պատմական հիշատակներ կապրինք, որոնք մեր հոգիներուն և կյանքին մեջ ներկա են և կհանդիսանան ուղեցույց և առաջնորդող ուժականություն մեր մտածումներուն և կգացումներուն: Այդ նվիրական հիշատակներն են՝ Մեծ եղեռնի սուգի հիշատակը՝ ապրիլի 24-ը, Վայրդանանց պատերազմի ոգեկոչումը և այսօրվա տոնախմբումը Սարդարապատի մեծ հաղթանակի, որ տեղի ունեցավ 1918 թվականի մայիսի 22—30 օրերուն: Սարդարապատի ճակատամարտը սովորական պատմական իրադարձություն մը չէր, այլ մեր հայրենիքի փրկության տարեթիվը: Մեր դարավոր թշնամին իր հայաջինջ ծրագիրը որոշած էր ամբողջացնել և երկրորդ եղեռնով բնաջնջել նաև արևելահայությունը: Սարդարապատի կռիվներուն մասնակցեցավ համայն հայ ժողովուրդը, նաև հայ հոգևորականությունը՝ Էջմիածնի երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսի օրհնությամբ: Կաթողիկոսի հրամանով այդ կռիվներու ընթացքին տևապես հնչեցին բոլոր հայ եկեղեցիներու զանգակները: Բավմաթիվ հայ հոգևորականներ ճակատ մեկնեցան՝ իրենց գլուխը ունենալով հայրենասեր Գարեգին եպս. Հովսեփյանցը և Զավեն եպիսկոպոսը: Կհիշվին նաև շատ քահանաներու անուններ, որոնք իրենց համագյուղացիներու հետ միասին ճակատ մեկնեցան: Այսպես, համայն հայության հերոսական մարտերով հնարավոր եղավ թշնամիի առաջընթացը կանգնեցնել, փրկել Հայաստանը: Այսպիսով փշրվեցան հայ ժողովուրդի դարավոր գերության շղթաները: Ստեղծվեցավ Հայաստանի պետությունը, և մեր երկիրը շարունակեց իր ազատ գոյությունը հետագա պատմական դեպքերու հոլովույթով մինչև մեր օրերը, մինչև արդի ապրող, աճող ու ծաղկող մեր հայրենիքը, խաղաղության և անվտանգության պայմաններու մեջ, ինչ որ գերագույն մխիթարությունն է մեր ազգին:

Սարդարապատի ճակատամարտը հիշելու պահուն, մեր օրհնությունը բերելով բոլոր զոհված հերոսներուն և փառքը հյուսելով այդ հաղթանակին, նաև պետք է մեր մտքին մեջ պայծառ կերպով կարողանանք գնահատել մեր հայրենիքի այսօրվա խաղաղ և ապահով կյանքը, եղբայրական ժողովուրդներու մեծ ու հզոր ընտանիքին մեջ:

Այսօր ամեն տեղ, ուր հայեր կան, կտոնախմբվի Սարդարապատի հաղթանակը: Եվ Հայաստանի սուրբ հողի վրա, իբրև մշտական աղոթքի, ուխտի և երախտագիտության կոթող, կբարձրանա հոյակերտ համալիրը՝ նվիրված Սարդարապատի հերոսամարտին: Մանավանդ Հայաստանի մեջ Սարդարապատի հաղթության հիշատակը ոչ միայն պատմական եղելություն է, այլ նաև ապրող հիշատակ, իրականություն և մղիչ ուժ այսօրվա հայաստանցիներու համար:

Կխորհիմ, թե բոլորս մեկ, այսօր, հոգեհանգստյան պահուն, պիտի աղոթենք Սարդարապատի կռիվներուն զոհված զորականներուն, զինվորներուն և հոգևորականներուն հոգիներուն խաղաղության համար, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին ի խնդիր հայրենիքի գոյատևման և ժողովուրդի ազատության: Աղոթենք նաև, որ Աստված հեռու պահե մեզ հետագային նման փորձություն-

ներե, և մեր փոքրիկ հայրենիքի սահմաններուն երբեք չմոտենա պատերազմի կրակը, երբեք չմոտենա սարսափը յաթաղանին:

Հարգա՜նք և օրհնությո՜ւն Սարդարապատի հերոսներուն:

Լո՜ւյս և օրհնությո՜ւն մեր վերածնած Մայր Հայաստանին ամենայն հայոց:

«Ուղիղ եղիցին աղօթք մեր որպէս խունկ առաջի քո, Տէր»: Ամեն:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ Սարդարապատի ճակատամարտում կոիված հերոսների հիշատակին:

*
* *

Նույն օրը, ժամը 14.30-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպվում է ճաշկերույթ Փարիզի հայոց եկեղեցական ներկայացուցչական վարչության կողմից:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ուշագրավում է Փարիզի ներկայացուցչական վարչության նախագահ Մեթր Արա Բարսեղյանը և բաժակ առաջարկում Նորին Սրբության քաջառողջության և երջանիկ հովվապետության համար:

Վերջում բոլոր ներկաներին Իր պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը:

ՍԵՎՐԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԿԻՑ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԲԱՑՈՒՄԸ

Նույն օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Սամվել Մուրադ Մխիթարյան վարժարանի տնօրեն հայր Ռաֆայել Անտոնյանի հրավերին, ներկա է լինում վարժարանին կից նոր մանկապարտեզի բացման հանդիսությանը:

Հանդիսությանը ներկա էին Վենետիկի Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր, գերապայծառ հայր Հովհաննես վրդ. Դերձակյանը, անվանի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին, վարժարանի Դպրոցասեր Տիկնանց Խնամակալության անդամները և տեսչական մարմինը, Աղքատախնամ Ազգային Միության վարչության անդամները, Որբախնամ Ազգային Միության, ազգային ու հայրենակցական այլ միությունների պատվարժան ներկայացուցիչներ և այլ անձինք:

Հանդիսությանը ներկա էր Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի նախագահ պրն. Ռոբերտո Կյուլպենկյանը:

Հանդիսությունը բաց է անում Սամվել Մուրադ Մխիթարյան վարժարանի տեսուչ հայր Ռաֆայել Անտոնյանը հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

«Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:

Միածնաէջ ս. խորանեն, մեր մայր հայրենիքեն, Լուսավորիչի մեր հավատքի հնոցեն, Օշականի մշտաշունչ մեսրոպական դամբանեն Դուք կբերեք մեզի օրհնությունը մեր հայրապետներուն և ամուր կպահեք օտարացրիվ հայությունը իրարու միացնող օղակը, անհրաժեշտ ու սրբազան գրավական մեր եկեղեցական ու ազգային միության, դավանաբանական, վարչական, գաղափարախոսական ու կուսակցական վանապանություններեն ալ անդին ու ավելի վեր, վառ պահելու համար միշտ հավատքը քրիստոնեական ճշմարտության, հավատար-

մությունը կապված մեր նահատակներու արյունին, որպեսզի հայ ազգը, միակամ ու միահոգի, կերտե իր պատմությունը՝ անմահացնելով իր բնիկ ու տոհմիկ անցյալը, բերելու համար հուսկ՝ իր բարոյական ու մշակութային նպաստը, այլազան ազգերու կողքին, որպեսզի մարդկությունը ընթանա միշտ բարիին ու ճշմարիտին առաջնորդող ուղիով՝ եղբայրության ու խաղաղության պսակներով լոկ վինված:

Ձեր ներկայությունը մեր մանկապարտեզի այս հանդիսավոր բացումին ինքնին կվկայե օրվան այս հանդիսության ներկայացուցած նշանակությունն ու կարևորությունը»:

Բացման խոսքից հետո գեղարվեստական ծրագրի կատարումով հանդես են գալիս վարժարանի սաները:

Վերջում Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունն է տալիս վարժարանի ուսուցչական կազմին, աշակերտությանը և իր շնորհաբեր Աջով կատարում բացումը վարժարանին կից նոր մանկապարտեզի:

Նույն օրը, ժամը 20-ին, Իսի լե Մուլինոյի և Կլամարի հայոց եկեղեցիների վարչությունների երիտասարդ անդամների կողմից կազմակերպվում է ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ելույթ է ունենում Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և հանգամանորեն խոսում Վեհափառ Հայրապետի կատարած մեծագործությունների մասին՝ իր գահակալության վերջին երեք տասնամյակների ընթացքում: Սրբազան հայրը ուրախությամբ ավետում է, որ Ֆրանսիայի կառավարությունը, ի գնահատումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի մարդասիրական, խաղաղասիրական և հոգեշինիչ գործունեության, որոշում է ընդունել Փարիզի Առնուվիլ արվարձանի կենտրոնական փողոցներից մեկին տալ «Վազգեն Առաջին» անունը:

Այնուհետև խոսք են առնում նաև Մայր Աթոռի բարերարներ տիար Նորհան Ֆրենգյանը և Իսի լե Մուլինոյի եկեղեցական խորհրդի ատենապետ Սարգիս Պետոյանը:

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Մայիսի 30-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի մոտ աջահամբույրի է գալիս բարեպաշտ տիկին Զեփյուռ Մեծպահքյանը՝ կատարելով կարևոր նվիրատվություն Ս. Էջմիածնի պայծառության համար:

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետին են այցելում Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Զավեն և Մարի Մնտիկյանները՝ Միլանոյից, ապա տեր և տիկին Սեթ Մոմճյանները՝ ԱՄՆ-ից:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ տիարք Էդվարդ Մարտիկյանի և Հրայր Հովնանյանի՝ ԱՄՆ-ից:

Ժամը 12-ին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի տնօրեն տիար Ռոբերտո Կյուլպենկյանը (Լիսաբոն) կարևոր տեսակցություն է ունենում Վեհափառ Հայրապետի հետ:

Ժամը 16-ին Վեհափառ Հայրապետը գոհունակությունն է ունենում ընդունելու այցելությունը Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ և ազգային մեծ բարերար տիար Ալեք Մանուկյանի:

Վեհափառ Հայրապետի և Ալեք Մանուկյանի միջև տեղի է ունենում մըտքերի փոխանակում Հայ Եկեղեցուն և ժողովրդին հուզող մի շարք հարցերի շուրջ:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Իսի լե Մուլինոյի եկեղեցական խորհրդի ատենապետ պրն. Սարգիս Պետոյանը իր բնակարանում կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա էր Հ. Բ. Ը. Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՓԱՐԻԶԻ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄՈՏ

Մայիսի 31-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Փարիզի արքեպիսկոպասարան, որտեղ Նորին Սրբությանը ընդունում է Փարիզի արքեպիսկոպոս կարդինալ Ժան-Մարի Լյուստիժեն:

Հայոց Հայրապետի և կարդինալ Ժան-Մարի Լյուստիժեի միջև տեղի է ունենում կրոյց եղբայրական մթնոլորտում:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Հունիսի 1-ին, չորեքշաբթի օրը, ժամը 10.15-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանի, Փարիզի «Շառլ դը Գոլ—1) օդանավակայանից մեկնում է Մոսկվա:

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար այստեղ էին եկել Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Տ. Գյուտ եպս. Նագաշյանը, կրոնական ընկերակցության հարգարժան անդամներ, փարիզահայ ծանոթ ազգայիններ և հավատացյալներ:

Նորին Սրբությանը բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էր եկել նաև սովետական դեսպանատան ներկայացուցիչ Լևոն Գասպարյանը:

Շուրջ երեք ժամ տևող հանգիստ թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Շերեմետևո-2» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին վրդ. Ներսիսյանը, Տ. Եվնիկ քհն. Պետրոսյանը:

Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի ներկայացուցիչներ Վիկտոր Վոլոդինը և Էդվարդ Գալուստյանը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 2-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում ներկա է լինում երեկոյան ժամերգության:

Եկեղեցին լեփ-լեցուն էր մոսկվաբնակ հայ հավատացյալ ժողովրդի բազմությամբ:

Հավարտ ժամերգության Վեհափառ Հայրապետը խոսք է առնում և եկեղեցում հավաքված ժողովրդին պատմում Անգլիա և Ֆրանսիա կատարած հովվապետական իր ուղևորության տպավորությունների մասին:

*

* *

Հունիսի 3-ին, ուրբաթ օրը, Հայոց Հայրապետը, մասնավոր հրավերովը Մոսկվայի և Համայն Ռուսիո Տ. Պիմեն Պատրիարքի, մասնակցում է Նորին Սրբության գահակալության տասներկուերորդ տարեդարձին նվիրված հանդիսությանը:

Հանդիսության ընթացքում Վեհափառ Հայրապետը շնորհավորում է Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքին նրա գահակալության 12-րդ տարեդարձի առթիվ, ցանկանում երկար տարիների գահակալություն և այդ առթիվ Նորին Սրբությանը նվիրում Իր դիմանկարը պատկերող ոսկե մեդալ:

Ապա Հայոց Հայրապետը հանդես է գալիս խաղաղությանը նվիրված բովանդակալից ճառով, որն ընդունվում է բուռն ծափահարություններով:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 4-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից վերադառնում է Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու համար Երևանի «Զվարթնոց» օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Տ. Սիոն արքեպիսկոպոսի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդանավակայան էին եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Նորին Սրբությունը առաջնորդվում է Ս. Էջմիածին և «Հրաշափառ»-ով մուտք գործում Մայր տաճար:

Տաճարում Հայոց Հայրապետին, ի դիմաց Մայր Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի, ջերմ խոսք է ասում Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Նորին Սրբությունը, շնորհակալական իր խոսքից հետո, առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությանը և Մայրավանքի պաշտոնեությանը բաշխում է հայրական իր օրհնությունները:

Բարի գալուստ Հայոց Հայրապետին Մայր Աթոռ Ս. Էջմիածին: